

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3912



Fengne 1926

2010

Խ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊՐՈԼԻՏՈՎԱՆԿԵՐ ԲՈԼՈՐ ՀԱՐԿՐՆԿԵՐԻ, ՃԻՄԵՐ.

Դ. ԱԲԵԶԴԱՌԻՉ և Ա. ԳՐՈՏԱՍՈՎ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դասագիրք քաղաքային համառոտ դասընթացով քաղ-
գրագիտական դպրոցների և ինքնակրթության համար

Ա. ՄԱՍ

(93)

Ա. Կ. (ր) Կ. Բ. Կ. Կից
«ԲԱԿԻՆԱԿԻ ԻՍՊՈՎՈՒԹՅՈՒՆ»
ԿՈՈՊԵՐԱՏԻԸ, ՀՐԱՏԱԿԱԳՈՒԹՅՈՒՆ.
Բաղու—1926 թ.

(02)
-13

3(02)

4-13

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԿՐՈՎԻ ԲՈՒՐՈ ԴԵՐԱԿՐՈՎԻ, միացեք.

Գ. Ա. Ա. Ա. Ա. ՊՐՈՍԱՍՈՎ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դասագիրք քաղաքային համառոտ դասընթացով
քաղգրագիտական գպլրոցների համար

| ՄԱՍ

Թուլլատը. Պետ. Գիտ. Խ.-ի գիտ.-քա-
ղաքական սեկցիայի հասակալուն. մեջ
աշխ.-հաք վարող յենթահանձ. կողմից

Թարգմ. Պ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ



Ա. Կ. (Բ) Կ. Բ. Կ. -ԿԻՄ
«ԲԱԿԻՆՍԿԻ ԻԱԲՈՂՋԻ».
ԿՈՂԳԵՐԱԾԻՎ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Տպագրված և
Ա. Կ. (բ) Կ. Բ. Կ.-կեց
«ՔԱԿԻՆՈՒԹԿԻ ԲԱՅՈՂԻ»:
Կոռպ. հրատ. տպագրանում

2001



78717 - սեղ

71-87



Վ. Բ. Լելիկյան

Հ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Ներկա դասագիրքը կազմված է Կ. Կ.-ի Ազիտպրոսպի կողմից 1926/27 ուս. տարվա համար հաստատված քաղաքային համառոտ տիպի քաղգրագիտական դպրոցների ծրագրի համաձայն:

Անցյալ տարվա հետ համեստատած՝ ծրագրը զգալի փոփոխությունների յեւ յենթարկվել վորոնք մեծ մասամբ, համաձայնեցված են ինչպես տեղական մի շարք կազմակերպությունների, այնպես և Կ. Կ.-ի Ազիտպրոսպի պրոպագանդիստական խմբերի հետ:

Համառոտ դասընթացով դպրոցի ծրագրի թիվը յենթարկվել է կրօնատման, և փոխանակ 22 ի, ինչպես անցյալ տարի եր, թեմաների թիվը դարձել է 15: Անցյալ տարվա ընթացքում, համառոտ տիպի դպրոցը մեր կուսակցական կրթության սիստեմի մեջ, վորոշակի կերպով գրավեց կուսակցական անդամության թեկնածուների դպրոցի տեղը: Համառոտ դպրոցի նպատակն ե—կուսակցության շարքերը մասնող բանվորին տալ սկզբնական հասկացողություն կուսակցության ընթացիկ քաղաքականության և նրա առաջ դրված խնդիրների վերաբերմամբ: Առաջին հերթին այստեղ դրվում է կուսակցական—դաստիարակչական խնդիր, —այն ե՝ զինել ավագա կուսակցականին՝ կուսակցության խսկական—լենինյան գծի և ներկուսակցական շինարարության վերաբերմամբ՝ վորոշ, մինիմալ գիտությամբ: Յեվ այլպիսով, համառոտ դպրոցը պետք է դյուրացնե անկուսակցական բանվորական մասսայի մեջ թեկնածվի (կանդիդատի) կողմից տարվող սկզբնական կուսակցական աշխատանքը: Այդ հանգամանքները թելագրեցին ծրագրի պատմական մասը սկզբել և ընդհակառակը, ուժեղացնել՝ կուսակցության տնտեսական քաղաքականությունը, ներկուսակցական շինարարության հարցերը և կուսակցության կողմից մասսաների վերաբերմամբ տարվելու դեկավարությունը թեմաները:

Սակայն, ծրագրի վերակառուցման խնդիրը դրանով չի սպառվում: Ավելի կարևորություն ունի ծրագրի այն, ըստ եյության կատարած վերամշակումը, վորը Համ. Կոմ. (բ) Կուս. XIV-րդ համագումարի վորոշումների հիման վրա՝ դասընթացի վերև հիշված կենտրոնական թեմաները յենթարկեց ճշտման և խորացման:

Կուսակցության XIV համագումարը մեր կուսակցական պրոպագանդայի համար ունեցավ խոշոր նշանակություն: Այն զվարի հարցերը, վորոնք միշտ կազմում եյին մեր ստորին կուսկրթական ծրագրի բովանդա-

կությունը, համագումարի վորոշումների լույսի տակ չտեսնված ցայտուն գծագրություն և խոշոր ակտուալ նշանակություն ստացան: XIX-դ համագումարից հետո, կուսակցական լայն մասսաների առաջ գրվեց մեր քաղաքականության և ներկուսակցական կյանքի հիմնական (արմատական) հարցերի ուշադիր կերպով ուսումնասիրելու խնդիրը: XIX-րդ համագումարի ոպպողիցիցի յերկութով, մեր յերկրի սոցիալիստական շինարարության ուղիների խկական—լենինյան ըմբռնումը յերիտասարդ կուսակցականին խորացրած կերպով բացատրելու անհրաժեշտությունը այժմ ավելի ևս սուր բնույթ և ստանում:

Ներկայումս, կուսակցական—դաստիարակչական աշխատանք գոյություն չի կարող ունենալ՝ առանց XIX-դ համագումարի վորոշումները մասսպիկ—կուսակցականին բացատրելու, և առանց ոպպողիցիցի սխալները մանրամասն ու բազմակողմանի քննադատության յենթարկելու:

Ինչպես համառոտ դպրոցի ծրագիրը, այսպես և առաջարկվող գասագիրը, կազմվել ե ի նկատի ունենալով ստորին կուսակրթության համար, ներկա ժամանակիս տեսակետից առաջնակարգ կարեռություն ունեցող այդ խնդրի լուծումը: Անհրաժեշտ ե նկատել, վոր ինչպես հեղինակները, այնպես ել խմբագրությունը, աշխատել են գործադրել բոլոր հնարավոր միջոցները, վորպեսզի XIX-դ համագումարի գիծը յերես ավելի պարզ և վորոշ կերպով, և առանձին ձևակերպումները ստանան իրենց ճշգրիտ արտահայտությունը: Բայց այնուամենայնիվ, դասագիրքը պատճեն չե սկզբնական քաղաքականության առանձնահատուկ կողմերից առաջ յեկող վորոշ թերություններից: Սկզբնական (ստորին) քաղաքագիտությունը ավելի ևս, պահանջում ե այնպիսի թարմ նյութերի գործադրում, վորոնք կարող լինելին ցույց տալ տնտեսական փոխվող պայմաններն ու կացությունը, կուսակցության ընթացիկ պրակտիկան և այլն, մի հանդամանք, վորը ավելի ևս դժվարացնում ե հեղինակի գործը:

Ինչ վերաբերում ե դասագրքում առաջ բերված թվերին, նրանք բոլորը ստացված են Պետպանից, Ներքին գործերի ժողոմատից, Պրոֆմիությունների Համ. Կենտր. Խորհրդից (ՎՀԸՊԸ) և այլ մարմիններից, վորոնց մասին և համապատասխան կերպով հիշվում ե զրքում:

Դասագրքի առանձին թեմաների խմբագրելուն մասնակցել են, ընկ. ընկ.՝ Բառաման Կ. Ի., Գուրլիչ Գ. Ս., Դվորյաց Վ. Մ., Լյատով Մ. Ն., Մոլոտով Կ., Պաշուկանիս Յ. Բ., Ստուչկա Պ. Ի., Շնդհանուր խմբագրությունը կատարել են, ընկ. ընկ.՝ Կոնորին Վ. Գ., Պոպով Կ. Ս., Զերնյավսկի Լ. Ն. Շուլ'ման Ս. Յ.:

Այս դասագրքի թերությունների մասին, կուսակցության ստորին ցանցի մեջ գործնականապես աշխատող ընկերների ամեն մի ցուցմունքը, հասկանալի յե, վոր հետագայում, վորպես նյութ, շատ և շատ ոգտակար և դառնալու այդ թերությունները ուղղելու գործում:

Ա. Ռ. Ա. Զ Ի Ն Բ Ա Ժ Ի Ն

ՀԱՄ. ԿՈՄ. (Բ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԻՔ ԴԵՐԸ

Ա.Ռ.Ա.Զ Ի Ն Բ Ա Ժ Ի Ն ԶՐՈՒՅՑ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի՞նչ ՄԱՍԻՆ Ե Առաջին զրույցի մեջ մենք քննելու յենք այն ԶՐՈՒՅՑԸ հարցը, թե ի՞նչու բան վոր գասակարգին, ի՞ր աշխատագրական կուսակրթության համար, հարկավոր ե կոմմունիստական կուսակցությունը: Այնուհետև, մենք կպարզ ենք, թե ի՞նչ հիմունքներով ե կառուցվում է ամ. Կ. (Բ) Կ-ը: Այդ հիմունքների մասին գրված ե կոմմունիստական կուսակցության կանոնադրության մեջ, վորի գլխավոր կետերը կայանում են հետեւյալում: 1) կուսակցության անդամի գիտակցությունը և գործոն լինելը (ակտիվություն), 2) գենոկրատիկ կենտրոնացում (գենոկրատիկ ցենտրալիզմ), 3) կարգապահություն (դիսցիպլինա) 4) բարձր—վորպես կուսակցության առաջնական հենարան:

Կուսակցության շինարարության (строительство) խնդրին մենք կվերադառնանք և մի քանի հետագա զրույցներում: Իսկ այս զրույցի գլխավոր նպատակն ե—յիւրացնել, թե վճրքան կարևոր ե կուսակցության մեջ կարգապահությունը, կուսակցության գործողությունների համաձայնեցված կատարելը և նրա հաստատուն միասնակամնություն՝ բանվոր դասակարգի կողմից կապիտալիզմի գեմ տարվող կովի հաղթանակի համար:

1. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՀԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ
(Բալ'շեվիկների) ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱ- Ներկայումս, ամբողջ Խորհրդային Սոցիա-
ԿԱՐԳԸ, ՆՐԱ ԿՈՒ- լիստական Հանրապետությունների Միության
ՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ մեջ, վորը բոնում ե երկրագնդի համարյա մեկ
ԱՆԴԱՄԻ վեցերորդ մասը՝ կատարվում ե շինարար մեծ
աշխատանք: Աճում և ամրանում ե մեր պետական արդյունաբե-

ըությունը, հին ֆաբրիկաները և գործարանները իրենց մեքենաներով ու սարքով յենթարկվում են վերանորոգման, շինվում են, նորերը: Վերջանում է հսկա ջրառելեկտրական կայարանի «Վոլխովստրոյի» կառուցումը, հիմք է դրվում մի շարք այլ կայանների: Քաղաքներում ևս առաջ է գնում բնակարանային շինարարությունը:

Գյուղատնտեսությունը ավելի և ավելի է անցնում տնտեսության մեջ կատարելագործված միջոցների գործ ածելուն (բազմագաշտային սիստեմ, սերմի տեսակավորում և այլն) և մի շարք ռայոններում արդեն ձին փոխարինվում է մեքենա-տրակտորով:

Մեր յերկրի ժողովրդի ընդհանուր կուլտուրական մակարդակը բարձրանում է: Բազմանում են դպրոցները, մեծանում ե լրագրերի, գրքերի և ռադիոյի պահանջը:

Վորն ե այն հիմնական ուժը, վորը իրագործում է վերոհիշյալ շինարար աշխատանքը: Ամեն մեկը հեշտ կերպով կպատասխանե: — բանվոր գասակարգը, կոմմունիստական կուսակցության զեկավարությամբ և գիւղացիության հիմնական մասսայի—միջակ և աղքատ գյուղացիության աջակցությամբ:

Մենք դեռ շատ առիթներ կունենանք խոսելու մեր երկիրը կառավարող բանվոր դասակարգի և նրա կուսակցության մեծ դերի մասին: Վորպեսզի այդ դերը կարողանանք ավելի լավ հասկոնար փորձենք վորոշել, թի ի՞նչ պետք է հասկանալ «դասակարգ» և «կուսակցություն» բառերի տակ:

ՀԱՍՏԱԿՈՒԿԱՆ Ի՞նչ ե նշանակում դասակարգ: Մարքսի ԴԱՍԱԿԱՐԳԵՐ և լենինի կարծիքով, ներկա ժամանակվա մարդկային հասարակությունը բաժանվում է յերկու հիմնական մասի՝ մեկը—այդ բուրժուազիան և (կապիտալիստները), մյուսը պրոլետարիատը (վարձու բանվորները): Անա, ժամանակակից կապիտալիստական հասարակության այս երկու հիմնական մասերը—բուրժուազիան և պրոլետարիատը հանդիսանում են այդ հասարակության հիմնական դասակարգերը: Ի՞նչ հատկանշի համաձայն, կամ ի՞նչ բանի հիման վրա, մենք կարողանում ենք տարբերել կամ զանազանել դասակարգերը: Անա թե ի՞նչ եր ասում դասակարգերի մասին լենինը: «Դասակարգերի զանազանության հիմնական հատկանիշը—այդ նրանց բոնած տեղն է հասարակական արտադրության մեջ, նետեապես և գեպի արտադրական միջոցները ունեցած նրանց հարաբերությունը»: Ուրեմն, նայած, թե ի՞նչ տեղ է բոնում մարդս հասարակական արտադրության մեջ, կամ ի՞նչ

հարաբերության մեջ ե արտադրության միջոցների վերաբերմամբ՝ դրա համաձայն ել վորեւ մեկին հաշվում ենք վորպես այս կամ այն դասակարգին պատկանող:

Որինակի համար վերցնենք մի կողմից մեր նախկին կապիտալիստներ Ռյաբուշինսկուն կամ Մարոզովին: Ի՞նչ տեղ ելին նրանք գրավում հասարակության համար պետքական ապրանքների արտադրության գործում: Նրանք իրենք բոլորովին չելին աշխատում և արտադրությունը կառավարում ելին ուրիշ մարդկանց միջոցով, բայց նրանց ձեռքին ելին արտադրության միջոցները, (հողը, գործարանները, մեքենաները, հում նյութը) Նրանք ելին արտադրության սեփականատերերը, վորի շնորհիվ շահագործում ելին բանվորներին. դրա համար ել մենք նրանց հաշվում ենք բուրժուազիան դասակարգի, կապիտալիստների դասակարգի շարքը:

Մյուս կողմից, ամեն մի բանվոր, վորը աշխատում եր կապիտալիստների ձեռնարկություններում, արտադրության մեջ նույնպես իր վորոշ տեղն եր գրավում: Նա շինում, պատրաստում եր ապրանքներ, բայց արտադրական միջոցներ չեր ունենում: Միակ բանը, վորի տերն եր կապիտալիզմի ժամանակ բանվորը, այդ նրա բանվորական ուժն եր, վորը ստիպված եր ծախել կապիտալիստին:

Իրենց բանվորական ուժը վաճառող բանվորները մտնում են պրոլետարական դասակարգի մեջ:

Բայց անհրաժեշտ է գիտենալ, վոր բացի բուրժուազիայից և պրոլետարիատից, կապիտալիստական հասարակության մեջ, մինչ այժմ մեզ մոտ ել, գոյություն ունեն, ազգաբնակության մի շարք, միջին խավեր, վորոնք վոչ բուրժուազիային և վոչ ել բանվոր դասակարգին են պատկանում: Նրանց կարելի յե մի ընդհանուր անուն տալ—մանը բուրժուազիա: Մրա մեջ են մտնում մանը առևտրականները, արհեստավորները, տնայնագործները (կուսարները) և գլխավորը—սորա մեջ պետք է հաշվել շատ յերկների բնակչության մեծապոյն մասին—գյուղացիության: Դա մանը բուրժուազիայի այն մասն ե, վորը մեզնում կազմելով ազգաբնակության ամենախոշոր մասը—մոտ 100 միլիոն—պետք է մեզ ավելի ևս հետաքրքի: Վլադիմիր իլիչը գյուղացիության համարում եր մի առանձին դասակարգ: «Ի՞նչումն ե կայանում գյուղացիության այդ առանձնահատկությունը: Այն բանում, վոր գյուղացիությունը, վորպես մանը սեփականատեր, այսինքն, վորպես արտադրության միջոցների (անասունների, յերկրագործական գործիքների և մեքենաների, իսկ կապիտալիստական յերկրներում և հողի) տեր, ավելի մոտ ե բուր-

ժուազիալին, բայց վորպես աշխատավոր, վորը աշխատում է հողի վրա առանց վարձու բանվորական ուժի շահագործման՝ մոտ ե պրոլետարիատին։ Գյուղացիության մի ուրիշ առանձնահատուկ կողմն ել այն ե, վոր յերբ շարունակում են գոյություն ունենալ դասակարգեր և մասնավոր առետուր, նրա միջից մի կողմից առաջ են գալիս բանվորներ—գուքը, ինվենտարը կորցրած ամենաաղքատ գիւղացիններից, վորոնք ստիպված են վարձու աշխատանքի գնալ, իսկ մյուս կողմից—գյուղական բուրժուատ (կուլակ)՝ շահագործողներ, վորոնք կարող են բանվորներ վարձել և նրանցից ոգուտ քամել։ Գյուղացիության այս առանձնահատուկ կողմերը (վորոնց մասին մենք հետագայում շատ անգամ կիսուենք) մեզ հարկավոր ե պահել այժմ մեր հիշողության մեջ։

Հոկտեմբերյան հեղափոխությունը դասակարգերի դերն ու տեղը մեր յերկրում արմատական փոփոխության յենթարկեց։ Ինչպես յայտնի յի, 1917թ. փետրվարին, միապետության անկումից հետո, մեզ մոտ շարունակում եր գոյություն ունենալ կարգածատերերի (պոմեշչիկների) և կապիտալիստների իշխանութիւնը։ Բանվորներն ու գիւղացինները մնացին վորպես յենթակա, շահագործող դաւահանգեր։ Հոկտեմբերյան մեծ հաղթանակից հետո պրոլետարիատը դարձավ՝ ֆաբրիկաների, գործարանների, հաղորդակցության միջոցների, հողի և նրա ներսի հարստութիւնների (հանքերի) տերը՝ վոչչացնելով սյդ կերպ կապիտալիստների իշխանութիւնը։ Այդ ժամանականից սկսած, պրոլետարիատը աշխատում է ի՞ր գործարաններում, ի՞ր համար միայն, յուր բանվորական պետության համար։ Բանվոր դասակարգը արտադրության տերը և մեր յերկրի տիրապետող դասակարգը գարձավ, բուրժուազիային իրեն յենթարկելով։ Միևնույն ժամանակ, Հոկտեմբերյան հեղափոխությունը վոչչացը կալվածատերերի (պոմեշչիկների) տիրապետութիւնը՝ վերադարձնելով գյուղացիութեան կալվածատերերի հողը։ Հոկտեմբերյան հեղափոխութիւնը նշանակում եր բուրժուազիայի և պոմեշչիկների իշխանութեան վոչչացում մեր յերկրում։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ Անցնենք այն հարցին, թե ի՞նչ ե նշանակում ԱԱԿՑՈՒԹՅՈՒՆ։ Կուսակցություն։

Հոկտեմբերյան հեղափոխության հաջողությունը հնարավոր յեղավ այն պատճառով, վոր մեր բանվոր դասակարգը, իր կովում հուսալի դեկավար ուներ։ Այդ դեկավարը կոմմունիստական կուսակցությունն եր, վորը, 1917թ. Հոկտեմբերին տվեց ճիշտ

վորոշում այն մասին, թե յե՞րբ և ի՞նչպես պետք ե հասցնել վճռական հարված բանվոր դասակարգի գլխավոր թշնամուն—բուրժուազիային։

Բանվոր դասակարգը պետք ե կոիվ մղե՛ բուրժուազիային հաղթելու, պետական իշխանությունը իր ձեռքը ձգելու և իշխանությունը խլելուց հետո ամեն տեսակի հականեղափոխականներին ու բանվոր դասակարգի թշնամիներին հաղթելու համար։ Պրոլետարիատի այս կոիվը, վորը մղվում ե բուրժուազիայի և նրան հարող մանր բուրժուական խավերի դեմ—կոչվում ե դասակարգային կոիվ։ Այսպղջ բանվոր դասակարգը միասին՝ չեն կարող միատեսակ վճռականութեամբ դեկավարել այդ կոիվը, և այդ կոիվը անհնարին ե տանել, յեթե բանվոր դասակարգին չի դեկավարում ավելի գիտակից, ավելի փորձված և անձնագոհ մասը։

Ինչո՞ւ պետք ե այդպես լինի։

Առաջին, վոր հեղափոխական կոիվը պահանջում ե գիտենալ այն բոլոր ուղիները, վորոնցով պետք ե առաջ տարվի կոիվը։ Իսկ այդպիսի գիտություն կարելի ե ստանալ միայն բանվոր դասակարգի նախկին կոիվների փորձը, նախկին հեղափոխություններն ու նրաց անհաջողությունները ուսումնական կությունը հետո և այլն։ Այդպիսի հեղափոխական փորձ բանվոր դասակարգը ամբողջովին վերցրած—չունի։ Հետո՝ բանվոր դասակարգը միատարր չե։ — կան հին բանվորներ, վորոնք տասնյակ տարիներով զբաղված են գործարանային արտադրության մեջ և կապիտալիստների դեմ յերկար տարիներով կոիվ են մղում։ Բայց կան և այնպիսիները, վորոնք գյուղից նոր են միայն եկել և նրա հետ կապը դեռ չեն կորցրել։ Նոքա պրոլետարական կովի փորձ համարյա թե բոլորովին չունեն։ Ահա, հեղափոխական կովի այդ անհրաժեշտ փորձը տալիս ե պրոլետարիատին իր կուսակցությունը, վորը կազմված ե Մարքսի և Լենինի գիտությամբ լուսավորված, լավագույն բանվորներից՝ հարստացած կապիտալիստների դեմ մղած իրենց սեփական պայքարի փորձով։

Յերկրորդ։ — Հեղափոխական կովի դեկավարությունը, եթե միայն այդ կոիվը մղվում ե աշխատավորների լիակատար հաղթանակի յուսով, պահանջում ե նկուղալին գաղտնի գործունեյության գժվարին շրջանի յերկարատև նախապատրաստություն։ Այս գաղտնի, ծածուկ գործունեյության խիստ գլուցը անցնում են սկզբում ամենամարձակ ու հեռատես և մեծ տոկունություն ունեցող բանվորների փոքրաթիվ մասը։

Իրենց նպատակների իրագործման համար, այսինքն՝ բանվոր դասակարգի ամբողջ մասսային կռվի համար պատրաստելու նպատակով՝ նրա այդ առաջավոր ներկայացուցիչները կազմակերպվում և միանում յեն կուսակցության մեջ։ Համ. Կ. (թ) Կ.-յան պատմությունը պարզ կերպով ցույց ե տալիս, թե ի՞նչպես, յերկար տարիների ընթացքում՝ ցարիզմի և բուրժուազիայի գեմ կռվելիս՝ տեղի յեր ունենում լավագույն հեղափոխականների (բայլշեիկների) ընտրումը։ Ինչու բանվոր դասակարգը Հոկտեմբերին իրեն դեկավարելու գործը վստահեց բալշեիկական կուսակցության և հեռու վանեց համաձայնողականներին, ի՞նչու և այժմ ու հետագայում նաև կոմմունիստական կուսակցության համարում ե ու կհամարե, վորպես իր իսկական առաջնորդը։ Միմիայն այն պատճառով, վոր մեր կուսակցությունը, յերկար տարիների ընթացքում, մինչ Հոկտեմբերը, տանում եր նախապատրաստական մեծ աշխատանք. նա անցավ 1905 թվի հեղափոխության փորձը, կրելով ցարական բեկցիայի^{*)} հալածանքները (1907—1911 թ.թ.), անցավ պատերազմի դաժան տարիների և Հոկտեմբերյան հեղափոխության մեծ դասերի միջով։

Վերջապես ամբողջ բանվոր դասակարգը չի կարող կռվի մղել իր շահերի համար՝ առանց կուսակցության դեկավարության նաև այն պատճառով, վոր բոլոր բանվորները միատեսակ չեն հասկանում իրենց դասակարգային շահերի համար մղվող կռվի անհրաժեշտությունը։ Վոչ բոլորն են պատրաստ զոհվելու այդ շահերի համար, իսկ բանվորների մի մասը չի գիտակցում բանվոր դասակարգի, վորպես ամբողջի, շահերը։ Շատ անդամ հետամնաց բանվորների խմբեր կարևոր նշանակություն են տալիս մասը շահերին, վորը բացատրվում է նրանց ընկճած զրությամբ, անգրագիտությամբ, կապիտալիզմի ժամանակ գործադրվող ծայրահեղ շահպործումով և այլն։ Այդպիսի բանվորները իրենց դասակարգի անգիտման են հանդիսանում։

Բայց գիտակց պեղութառները, այսինքն նրանք, վորոնք հասկանում են իրենց դասակարգի, վորպես ամբողջի, անելիքները և նրանց իրագործելու միջոցները — այդպիսիները կազմակերպվում են քաղաքական կուսակցության մեջ՝ ամբողջ պեղութառիատի կը-ռիվը զեկավարելու համար՝ այն նպատակով, վորպեսզի բանվորական մասսաների այդ կռիվը դարձնվի ավելի գիտակից և տարգի ռանտապարհով։

^{*)} Բեակցիա—նշանակում ե բուրժուական կառավարության, նախկին, այսինքն մինչեղափոխական կարգերին վերադառնությունը։

Միջադային բանվորական շարժման որինակները ապացուցում են, վոր բանվոր դասակարգին՝ կապիտալիզմի գեմ մղվող կռվի ընթացքում՝ անհրաժեշտ ե ունենալ դեկավարող հեղափոխական կուսակցություն։ Փարիզի կոմմունան^{*)}, եթե շատ զուտ ընկավ հականեղափոխականների հարվածների տակ, պատճառը այն եր, վոր պեղութառիատի առաջավոր մասերը միասնական հեղափոխական կուսակցության շուրջը չեյին համախմբված։ Նույն բանն ե մեզ սովորեցնում և գերմանական պեղութառիատի կողմից, մեր հեղափոխությունից հետո կատարած մի շարք հեղափոխական շարժումները։ Այդ հեղափոխական շարժումները անհաջողության մատնվեցին այն պատճառով, վոր գերմանական կոմմունիստական կուսակցությունը՝ մարտական հեղափոխական կուսակցություններ՝ այնուամենախիվ նա դեռ ևս մասսայական կուսակցությունն չեր դարձել, քանի վոր հաղթության հաջողության համար գերմանական ամբողջ բանվորական մասսաների հետ հաստատուն կապ չեր ստեղծել։

Բանվոր դասակարգին կոմմունիստական կուսակցությունը հարկավոր ե վոչ միայն մինչև իշխանության խլելը, և վոչ միայն իշխանության տիրապետություն ժամանակ, այլև և նրանից հետո՝ յերբ իշխանությունը արդեն գտնվում ե պեղութառիատի ձեռքին։

Բանվոր դասակարգին, բուրժուազիայի գեմ տարած հաղթանակից հետո ել, հարկավոր ե կոմմունիստական կուսակցություն առաջին նրա համար, վոր դեռ յերկար ժամանակ, թե ոտար յերկների և թե մեր բուրժուազիան, ամեն միջոցների կղիմեն աշխատավորների իշխանությունը տապալելու համար։ Այդ բանը մենք տեսանք մեր հանրապետության մեջ տարվող քաղաքացիական կը-ռիմերի տարիներին։ Մենք տեսանք թե ի՞նչպես 1918 թվականին բուրժուազիան կռվեց և տապալեց Հունգարիայի (Վենգրիայի) և Բավարիայի խորհրդային (սովետական) իշխանությունները, վորտեղի բանվորները, չունեյին կռվի մեջ փորձված կոմմունիստական կուսակցություններ։ Յերկրորդ, կոմմունիստական կուսակցությունը բանվոր դասակարգին հարկավոր ե ներկայումս ել, իշ-

^{*)} Փարիզի կոմմունան կազմակերպվեց 1871 թ. մարտի 18-ին, Ֆրանսիայի ֆեռմանիայի հետ վարած անհաջող պատերազմից հետո։ Առաջին անգամ այն ժամանակ պեղութառիատի իր ձեռքը վեցցրեց իշխանությունը։ Բայց, վորովհետեւ, նա դեռ չուներ բավարաշափ հեղափոխական փորձ, վորովհետեւ նա զբուղացիության հետ կապ չուներ, և գլխավունը—չուներ զեկավարող կուսակցություն—կոմմունան նույն տարվա մայիս ամսին ձբնավեց գրանսիական բուրժուազիայի կողմից։

խանությունը բուրժուազիայի ձեռքից խլելուց հետո, նույնպես և այն պատճառով, վոր բանվոր դասակարգի առաջ ձգված ե սոցիալիզմի շինարարության դժվարին ճանապարհը։ Այդ ճանապարհին կուսակցության ղեկավարությունը նրա համար նույնքան ևս կարուրություն ունի, վորքան և հարկավոր եր այդ ղեկավարությունը կալվածատերերի (պոմեշչիկների) և կապիտալիստների ձեռքից իշխանությունը խլելու համար մղվող կովում։

ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒ. Կոմմունիստական կուսակցությունը իրեն թշունը ԲԱՆՎՈՐ համար նպատակ ե դնում բանվոր դասակարգի, ԴԱՍԱԿԱՐԳԻ ՇԱՀԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏԻՉՆ Ե վորպես ամբողջի շահերի պաշտպանության խնդիրը։ Նա, բացի պրոլետարիատի շահերից, ուրիշ այլ շահեր չունի։ Միայն կոմմունիստական կուսակցությունը, վորպես բանվոր դասակարգի առաջավոր մասը, ավելի լավ, ավելի պարզ ե արտահայտում բանվոր դասակարգի ձգտությունը ուցանկությունները և ցույց ե տալիս սրանց իրագործելու ուղիները (ճանապարհները)։ Որինակ, —իմպերիալիստական պատերազմի ժամանակ, դեռ մինչ այս, յերբ բանվոր դասակարգը կհասկանար այդ պատերազմի կողոպատիչ բնույթը, լենինի կուսակցությունը պրոլետարիատին և գյուղացիության հասկացնում եր, վոր պետք ե վերջ տալ ժողովրդների միջև տարպող հանցավոր սպանդանոցին։ Լենինը և բոլոր բարձրացիները, պատերազմի հենց սկզբից սկսած ասում եյին, վոր այդ պատերազմը պետք ե դարձնել քաղաքացիական պատերազմ՝ ուղղված ցարի և բուրժուազիայի դեմ։ Կամ, թե չե հիմա, կոմմունիստական կուսակցությունը ուժ շահերի պաշտպանության համար ե կոչ անում բանվոր դասակարգին կովել՝ գործից կամայական կերպով բացակայելու (պրոգուլների) դեմ, աշխատանքի արտադրողականությունը ու Փաբրիկ-գործարանային արտադրանքների վորակը բարձրացնելու ու մեր ամբողջ տնտեսության մեջ ինսայողություն մտցնելու համար։ Ինարկե, միմիայն ամբողջ բանվոր դասակարգի շահերի համար։ Այս որինակներից բոլորին պարզ է, վոր պրոլետարիատի կուսակցությունը չունի այլ նպատակներ, բացի նրանցից, վորն ունի ինքը պրոլետարիատը։

Մեր Համամիութենական կոմմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը գիտակից բանվորների կամավոր մարտական մի միություն ե, վորոնք վոչ թե իրենց անձնական շահերի համար են միացել կուսակցության մեջ, այլ կովելու բանվոր դասակարգի, վորպես մի ամբողջի շահերի համար—պրոլետարիատին և

բոլոր աշխատավորներին կապիտալիզմի լծից ազատելու և կոմմունիստական հասարակարգի կառուցելու նպատակ։

Այդ պատճառով ամեն մի բանվոր, մտնելով կուսակցության մեջ, պետք ե հիշի, վոր կուսակցականի կոչումը նրան վոչ մի անձնական ոգուտ չի տալու, այլ ընդհակառակը, Համ. Կոմ. Կուս.-յան անդամի կոչումը, նրա վրա, իր դասակարգի հանդեպ՝ դնում ե հսկայական պարտականություններ։ Կարճ ասած, այդ պարտականությունները կայանում են նրանում, վոր ամեն մի բոպեյին պատրաստ լինի անձնական զոհաբերության կուսակցության համար, նշանակում ե և ամբողջ բանվոր դասակարգի շահերի համար։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ Մեր կուսակցությունը կազմվել ե հեղականունշրությունի-փոխական կոփակարի յերկարատև փորձի հիման վրա, Կ.(Բ)Կ.-յան վրա։ Մեր կուսակցության կազմակերպողն ու Ա.ԴԱՄԻ ՊԱՐՏԱ-առաջնորդը - Վլադիմիր Իլիիչ Լենինը, շատ տականությունները բիներ ե աշխատել այն բանի վրա, թե ինչպես կառուցել հեղափոխական կուսակցությունը։ Բանվորական շարժման աճման հետ միասին, Իլիիչի ղեկավարությամբ, մեզնում զարգանում և կազմակերպվում եր մեր կուսակցությունը։ Վլադիմիր Իլիիչը ահագին նշանակություն եր տալիս այն բանին, թե ինչպես ե կառուցված պրոլետարիատի ամենակարևոր ղեկավարող կազմակերպությունը—կուսակցությունը։ Նա ուղղակի ասում եր. «Իշխանության համար մղվող կովում պրոլետարիատը, բացի կազմակերպությունից, ուրիշ այլ գենք չունի»։ Յեվ կազմակերպչական խնդիրները, ալմինքն կուսակցության կառուցման խնդիրները, Համ. Կ. (Բ) Կ.-յան ներկուսակցական կյանքում խաղացել և այժմ ել խաղում են կարեոր դեր։

Այն բանից, թե ինչպես ե կառուցված կուսակցությունը, ինչպիսի կազմակերպչական ձեռքի մեջ ե մտցրած նրա կյանքը, ով ե կազմում նրա վլխավոր կորիզը, ինչպես ե գրված կարգապահությունը (գիսցիպլինան)՝ կախված ե և կուսակցության ամրությունը և միաձույլ լինելը։ Կուսակցության միասնակությունից և ամրությունից են կախված պրոլետարական հեղափոխության հաջողությունը և հաղթանակը։

Հեղափոխական բանվորական կուսակցություն կառուցելու այդ փորձը Համ. Կոմ. (Բ) Կուս.-յան կանոնադրության հիմքն ե կազմում, Կուսակցության կանոնադրությունը ասում ե, թե ինչ

հիմքերի վրա և կառուցվում բայլշնիկների կուսակցությունը, և ինչ իրավունքներ ու պարտականություններ ունեն կուսակցության անդամներն ու թեկնածուները: Գլխավոր հիմունքները, վորոնց վրա կառուցված և կուսակցության կանոնադրությունը, հետեւյալներն են՝ 1) կուսակցության անդամի գիտակցությունը և ակտիվությունը, 2) կարգապահություն, 3) դեմոկրատիկ կենտրոնացում 4) բջիջը—վորպես կուսակցության առաջնական հիմք:

ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ. Մեր կանոնադրության առաջին պարագարաֆը ասում է.—«Կուսակցության անդամ համարվում է ամեն վոք, ով ընդունում է կուսակցության ծրագիրը, աշխատում նրա կազմակերպություններից վորեւ մեկում, յենթարկվում կուսակցության վորոշումներին և անդամավճար տալիս»:

Կուսակցության անդամ լինելու համար հարկավոր է ընդունել նրա ծրագիրը, այսինքն պետք է հաստատուն կերպով համոզված լինել, վոր կուսակցության նպատակները, առաջադրած խընդիրները և ընտրած ճանապարհները իսկապես ճիշտ են: Սակայն, բավական չե կուսակցության ծրագիրն ընդունելը: Պետք է մտնել նրա մի վորեւ կազմակերպություններից մեկը (բջիջը) և ամենայն սրտով աշխատել մինչ այս, վոր գործի պահանջած դեպքում տալ կուսակցությանը և իր սեփական կյանքը:

Ի՞նչումն ե կայանում կուսակցության յուրաքանչյուր անդամի ամենորյա սովորական աշխատանքը: Ամենից առաջ—կուսակցական ժողովներ հաճախելու, կուսակցության հանձնարարությունները կատարելու, անդամավճարը կանոնավոր կերպով վճարելու և կուսակցության պատմությունը, ծրագիրն ու կանոնադրությունը և նրա քաղաքականությունը ուսումնասիրելու մեջ:

Սակայն, դա—աշխատանքի ամենափոքր մասն ե: Պետք է գիտենալ և չմոռանալ, վոր կուսակցության իսկական անդամ կլինի նա, ով վճի միայն կանոնադրությունն ու ծրագիրը անդիր գիտե, (լենինը հաճախ ասում եր.—«մեզ հարկավոր չեն կոմմունիզմի փոխասցներ և կարիք չտնենք շատախոսների») այլ նա, ով բացի դրանից, մշտապես, իր վրա կրում է պատասխանատվություն կուսակցության համար, չմոռանալով, վոր կուսակցությունն ել վերցնում է պատասխանատվություն իր ամեն մի անդամի համար: Այս պատճառով կոմմունիստները ամեն ժամանակ և ամեն տեղ պետք է անկուսակցականներին որինակ ցույց տան: Դազգանի վրա աշխատելիս, պետք է գործին լիակատար ուշադրություն դարձնել, զգալ, վոր ամեն մի աշխատանքի մեջ—յերբ սրում կամ

գործում ես դազգանի վրա, շարում կամ տպագրում ես գիրք, յրագիր և այլն—դրանով կառուցում, ամբացնում ես մեր տնտեսությունը, աշխատում ես կուսակցության և բանվոր դասակարգի համար:



Բայց այդ ել քիչ ե: Կուսակցության անդամը պետք է գործում մասնակցություն ցույց տա պրոֆեսսիոնալ ու կոռպերատիվ աշխատանքներին և ինքն ել ոգնե մեր խորհրդային ապարատի պակասությունները և բացասական կողմերը ուղղելու գործին:

Բայց այդ ել դեռ բոլորը չե: Կուսակցականը պետք է ուշագրությամբ հետեւի թե ինչ ե ասում անկուսակցականը: Շատ անգամ անկուսակցականը, ընկերական խոսակցության մեջ, անբավականությունն ե հայտնում ֆաբրութակամի և կամ այլ խորհրդային հիմնարկության պակասությունների առթիվ: Հարկավոր է վոչ միայն լսել այդ գանգատները, այլ և պայքարել այդ գանգատները առաջ բերող պակասությունների գեմ: Միաժամանակ, անհրաժեշտ ե անկուսակցականի մեջ տարակուսանքներ և հուզմունք առաջ բերող հարցերի մասին հասկանալի և ճիշտ բացարություն տալ նրան:

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ. կանոնադրությունը պահանջում է կարգավոր (ԴԻՄՑԻՊԼԻՆԱ) պահության (դիսցիլինայի) կատարում, այսինքն՝ կուսակցության վորոշումներին յուրաքանչյուր կուսակցականի խստիվ յենթարկումը:

Կուսակցության համար անհրաժեշտ է գործողության միասնականություն: Այդ հնարավոր է միայն այն գեղքում, յեթե նա միացված ե ներքին, կուռ և հաստատուն կարգապահությամբ: Կուսակցական կարգապահությունը կայանում է նրանում, վորպեսզի իր անձնական կամքը կուսակցականը յենթարկի կուսակցության մեծամասնության կամքին, և այդպիսով ոժանդակի ամբողջ կուսակցության միասնական գործողության: Յեթե մեր կուսակցության մեջ, ամեն մեկը ազատ լինելու այն, ինչ իր կամքը կթելազրեր, այդ գեղքում, մեր մեջ միասնականություն գոյություն չեր ունենալ, նշանակում ե թե ուժերը և թե կուսակցությունը կդառնային ակումբ՝ քաղաքական հարցերի շուրջը մտքերի փոխանակություն ունենալու համար:

Այստեղ—ինչպես զորքի մեջ: Առանց կարգապահության (դիսցիլինայի)—զորք գոյություն չի կարող ունենալ: Բայց զորքի մեջ պետությունը քաղաքացիներին հավաքում և զորահամբերի (մորիլիզացիայի) միջոցով, իսկ կուսակցության գործությունը համար:



կամավոր կերպով, և ինարկե զորքը, ամբողջովին կուսակցության հետ նմանացնել չի կարելի: Կուսակցության մեջ մանելով, ընկերը կամավոր կերպով և համան առնում իր վրա կարգապահ լինելու պարտականությունը, և առանց կարգապահության (դիսցիլինայի) — նա կոմմունիստ չե:

Յեթե կուսակցության մեջ կարգապահություն չլիներ, փորի միջոցով ապահովում ե միասնականությունը, և նրա բոլոր գործողությունների համաձայն կերպով կատարվելը, այդ դեպքում նա չեր կարող իր առաջ դրված խնդիրները իրականացնել:

Կոմմունիստը, իր կարգապահ լինելը պետք է ամեն որ գործով ցույց տա: Բջիջի վորոշումները, բյուրոյի հանձնարարությունները, կուսակցականը պետք ե կատարի ճշտապես և առանց ուշացնելու: Ինչքան ել առաջին հայացքից փոքր թվա կուսակցության հանձնարարությունը, բայց և այնպես այդ «փոքր» գործերը իրենց գումարում ստեղծում են՝ կուսակցության քաղաքական ուժը, նրա հեղինակությունը բանվորական և զյուղացիական մասսաների մեջ, և ԽՍՀՄ-յան մեջ սոցիալիստական շինարարության դժվարին գործի դեկավարելու ընդունակությունը:

Մենք ուժեղ ենք մեր միաձուլությամբ և կարգապահությամբ: Հաղթեցինք Հոկտեմբերին, ջարդեցինք մեր թշնամիներին քաղաքացիական կովում, հաղթեցինք սովը, այժմ ել մեր տնտեսությունը հասցնում ենք նախապատերազմյան չափին, կառուցում ենք սոցիալիզմ: — այդ բոլորը մենք կատարեցինք և կատարում ենք միայն բայլշիկական յերկաթե կարգապահության չնորհիվ:

ԴԵՄՈԿՐԱՏԻԿ
ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ
(ԴԵՄ. ՑԵՆՏՐԱԼԻԶՄ) Մեր կուսակցության կազմակերպչական հետեւյալ հիմունքն ե — դեմոկրատիկ կենտրոնացումը: Ի՞նչ ե նշանակում այդ:

Նախ և առաջ, կուսակցությունն աշխատում ե ներկուսակցական դեմոկրատիայի հիմունքներով, այսինքն կուսակցության բոլոր դեկավար մարմինները, (Բջիջի բյուրոներ, գավկոմ, ույլում և այլն) ընտրվում են կուսակցությունը և կոնֆերենցիաներին: Բջիջների բյուրոները և կուսկոմները պատասխանատու են կազմակերպության առաջ և հաշվետու են նրան:

Տեղական գործերում (աշխատողների բաշխում, ավելի բարձր կանգնած կուսարմինների ցուցմունքներն անցկացնելը և այլն) կազմակերպությունները գործում են ինքնուրույն կերպով: Անա այս ե դեմոկրատիան:

Յերկրորդ՝ բոլոր կուսակցական մարմինները խիստ յենթարկման մեջ են գտնվում: — ստորին կադ


մակերպությունները բարձրերի վերաբերմամբ: (Բջիջի բյուրոն յենթարկում ե սայկոմին կամ գավկոմին, վերջինս — նահկոմին և այլն) և վերջապես, բոլոր բնտրովի մարմինները, ամբողջ կուսակցությունը միասին վերցրած, յենթարկում ե «կենտրոնին», աւտինքն կուսակցության համագումարին, իսկ համագումարների միջև յեղած ժամանակաշրջանում — Կենտրոնական Կոմիտեյին: Անա այս ե կենտրոնացումը (ցենտրալիզմ) (Տես № 1 սխեման յեր. 20):

Մեր կուսակցության մինչ Հոկտեմբերյան շրջանի, Հոկտեմբերյան Հեղափոխության, քաղաքացիական կոիվների տարիների և Խորհրդային Հանրապետությունների տնտեսության վերականգման շրջանի պատմությունը բոլորին ապացուցեց, զոր միայն այսպէս կառուցված կուսակցությունը կուրող ե իրականացնել իր նպատակներն ու առաջադրած խնդիրները: Նույնպես և բոլոր յերկրների լեղբայրական կոմմունիստական կուսակցությունները՝ մեր կուսակցության կառուցման փորձը աչքի առաջ ունենալով կառուցվում են գենոկրատիկ կենտրոնացման սկզբունքների հիման վրա:

Կարևոր ե նկատել, զոր կուսկոմները վոչ միայն հանդիսանում են, վորակես գործադիր մարմիններ, այլև տեղական կազմակերպության ամբողջ ընթացիկ աշխատանքը դեկավարությունը կոմիտեները: Կուսակցության կազմակերպչական խնդրում սա ամենակարևոր կետն ե: Դիսկուսիայի (բանակովի) ժամանակ (1923 թ. վերջին և 1924 թ. սկզբին), ուղղողիցիայի մեջ մտնող ընկերները սիսալ կերպով մտածում և ապացուցում ենին, զոր կոմիտեները ընդհանրապես և Կ. Կ.-են մասնավորակես, պետք ե միայն կոնֆերենցիաների և համագումարների գործադիր մարմինները հանդիսանան: Կուսակցությունը, իր ԽIII-րդ համագումարում ընդունեց, զոր կազմակերպչական կարևոր խնդրի արդի բացարձությունը հակասում ե բայլշիկմի — լենինիզմի վորուն, թերորիային և գործնականին (պրակտիկային):

Կոնֆերենցիաներին, համագումարներին կոմմունիստները ընտրում են լավերից — լավագույներին, ուստի և ընտրված կոմիտեները՝ մինչ հետեւյալ կոնֆերենցիաների և համագումարների հավաքվելը՝ հանդիսանում են կուսակցության վոչ միայն գործադիր, այլև կեկավար մարմինները:

Բջիջ կուսակցության հիմնական կազմակերպությունը հանդիսանում ե կուսակցական բջիջը: Ֆորմիկ — գործարանային



Սխեմա № 1. Ի՞նչպիս և կառուցված չամ, կոմ. (բ.) կուս.-ը

(Կազմված և չամ, կոմ. (բ.) կուս.-ի կանոնագրության համաձայն, մի քանի կրճատամերով
—ամիկի պարզ դարձնելու նպատակով)

կոմբջիջը մեր կուսակցության ամբոցն ե հանդիսանում։ Այստեղ—
ֆարբիկայում և գործարանում, բանվոր դասակարգը, արտադրու-
թյան շնորհիվ միասին հավաքված, կազմակերպվում ե կուսակցու-
թյան մեջ։ Բջիջը բանվորական մասսաներին կապում ե ամբողջ
կուսակցության հետ։ Նա անց ե կացնում տվյալ ձեռնարկության
բանվորության մեջ կուսակցական լոգունգներն ու վորոշումները և
այդտեղից ել կուսակցության նոր անդամներ ընդունում։

Բջիջի ընդհանուր ժողովը քննում է՝ քո դաքական նշտնակու-
թյուն ունեցող հարցեր (որինակ ԽՍՀՄ միջազգային զրությունը),
հանրապետության անտեսության զրությունը, գործարանի կյանքը,
բջիջի աշխատանքին վերաբերող հարցեր, կուսակցության մեջ նոր
անդամներ ընդունելու և այլ խնդիրներ։ Բջիջի ուշադրության
կենտրոնը պետք ե կազմի համ. կոմիտեի առաջ զրված
հերթական խնդիրները։

Կոմբջիջը, ֆարբործարանային կոմիտեի միջոցով պետք ե
ցույց տա մեծ նախաձեռնություն բանվորների նյութակուն և
կուլտուրական շահերի պաշտպանության խնդրում։ Նա պետք ե
արհմարմինների (պլոդորդանների) միջոցով մեծ ուշադրություն
դարձնի՝ ինչպես աշխատանքի արտադրողականության, նույնպես
և ձեռնարկության միջի կարգապահության վրա։ Վերջապես, թե,
բջիջը ամբողջովին վերցրած, և թե նրա ամեն մի անդամն առան-
ձին, պետք ե անտեսության վերաբերմաբ խնայող և աշխատա-
սիրական վերբերմունքի որինակ ցույց տան։

Փոխվում ե կյանքը, փոխվում են և կուսակցության կազմա-
կերպչական առանձին ձևերը, բայց մենչ այն, յերբ շարունակում
ե գոյություն ունենալ դասակարգային կոփը. Համ. կոմ. (բ.)
Կոմիտեի լենինյան կանոնագրության գլխավոր հիմունքները—նրա
անդամների գիտակցությունը, գործոն լինելը, (ակտիվությունը),
խիստ կարգապահությունը, գեմոկրատիկ կենտրոնացումը և
առաջնական կուս. Բջիջի վրա հիմնվելը—կմնան անփոփոխ։

Հ Ա. Բ. 3. Ինչու և ինչ բանի համար և անհրաժեշտ կոմմունիստա-
կան կուսակցությունը բանվոր դասակարգի համար։

2. ՊԱՅՔԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՆԵՐԿՈՒՍԱԿՑՈՒՄ

Կուսակցության կառուցումը այն հիմունք-
բրակցիս ներով, զորոնք վերը հիշված ելին, ապահովում
ե նրա միասնականությունն ու միաձուլությունը։ Բայց և այն-
պես, կուսակցության մեջ հնարավոր ե խմբագրումների, կամ

ինչպես մենք նրանց անվանում ենք — ֆրակցիաների*) առաջ գալը:

Ներկուսակցական գեմոկրտափայի համաձայն, կուսակցության ամեն մի անդամ իրավունք ունի ամեն մի հարցի մասին հայտնելու իր կարծիքը, կուսակցության կողմից վորոշում ընդունելիս՝ իր ցանկացած ազդեցությունը գործ դնել։ Բայց, հասկանալի ե, վոր այդ իրավունքը արվում ե կուսակցականին մինչ այն, յերբ կուսակցությունը կը կայացնի վերջնական վորոշում։ Դրանից հետո ամբողջ կուսակցությունը, ինչպես մեկ մարդ, առանց վորեւ շեղումի, պետք ե ընդունված վորոշումը իրականացնե կյանքում։ Բայց յերբ կազմվում ե կոմմունիստների մի ամբողջ խումբ, վորոնք խոսք են կապում միասին հանդես գալ՝ արտաքուստ յենթարկվելով կուսակցության ընդհանուր կարգապահության, իսկ գործով — իր հերիմքակային կարգապահության՝ այդ գեպօւմ, մենք, արդեն, կուսակցության ներսում ունենք Փրակցիա։ Այդպիսի ներկուսակցական Փրակցիան շատ անդամ սկսում ե գաղտնի կերպով պայքարել կուսակցության գեմ։ առանց կուսակցության գիտության հավաքվում են առանձին, տարածում են, կուսակցությունից գաղտնի, զանազան նամակներ և փաստաթղթեր։ Ֆրակցիաները առաջ են գալիս մեծ մասամբ այն ժամանակ, յերբ յերկիրը ապրում ե այս կամ այն տաղնապը (կրիզիս), այս կամ այն խոշոր գժվարությունը։ Կուսակցության համար այդ գժվարին որերին, սովորաբար կուսակցության մի քանի անդամներ չեն կարողանում կուսակցական վարքագիծը պահպանել, ընկնում են մասն բուրժուազիայի ազգեցության տակ և դուրս են յենում կուսակցության գեմ՝ այդ նպատակով կուսակցության ներսում իրենց Փրակցիան կազմակերպելով։ Կուսակցության ընդհանուր գծի հետ անհամաձայն նման կոմմունիստների խմբակը, փորձում ե ոգտագործել կուսակցության աշխատանքի այդ գժվարին կացությունը։ Որինակ, 1918 թվին, գերմանացիների հետ խաղաղության դաշն կնքելու ժամանակ, յերբ դեռ Խորհրդային իշխանությունը չեր ամրացել, կուսակցության մեջ առաջ յեկագ «ձախ կոմմունիստների» Փրակցիան, վորի մեջ մասնողները խորացության դաշն կնքելու խնդրում համաձայն չեյին կուսակցության հետ։ Ֆրակցիան չեր յենթարկվում կուսակցության (կ. կ.-ին) և հրատարակում եր նույն իսկ, իր Փրակցիոն, տպագիր

*) Կուսակցության ներսը առաջ յեկած Փրակցիաները չունետ զանազան անկուսակցական ժողովներին կամ համապումարներին, մեր կուսակցության կողմից կազմակերպող կոմմունիստական Փրակցիաների հետ։

Այդ մասին մանրամասն զրված է յերկրորդ զրույցում։

«Կոմմունիստ» որդանը, ուներ իր «բյուրոն», վորը ղեկավարում եր Փրակցիոն աշխատանքները։ Միայն, յերկար ժամանակից հետո, «ձախ կոմմունիստներից» շատերը հասկացան, վոր նրանք կոպիտ կերպով սխալվում եյին և վոր այն քաղաքականությունը, վոր նրանք ուղում եյին վարել՝ մանր բուրժուական քաղաքականություն եր։ Կամ մի այլ որինակ, 1923 թ. վերջի և 1924 թ. սկզբի ոպպոզիցիան։ Նա ծագեց կուսակցության աշխատանքի դժվարագին պայմաններում։ 1923 թվի աշնանը մեր տնտեսությունը տագնապի (կրիզիսի) մեջ եր, վորը կայանում եր նրանում, վոր Փարբիկ-գործարանային ապրանքները, իր ենց բարձր գների պատճառով, զյուղացիների կողմից չելին գնվում։ Բացի դրանից, խորհրդային թղթի փողերը բոլորովին կորցրել եյին իրենց գինը, բանվորների աշխատավարձի վճարումը յերկար ժամանակով ուշացվում եր և այլն։ Ոպպոզիցիան ոգտվեց այդ գժվարություններից և մեր կ. կ.-ի գեմ գրոհի (հարձակման) դիմեց՝ ցանկանալով փոխել նրա քաղաքականությունը։ Նա զանազան նամակներ եր ուղղում յերիտասարգության, խոսում եր կուսակցության հին բոլշևիկական միջուկի (կրիզիսի) այլասեռման մտսին և այլն։ Այժմ բոլորի համար պարզ ե, վոր այդ ոպպոզիցիան նույնպես արդյունք եր մանր բուրժուազիայի ազգեցության, վորին, կուսակցության համար գժվար ժամանակին, յենթարկվեցին մի քանի կուսակցականներ։ Վերջապես, XIV-րդ համագումարի ոպպոզիցիան առաջ եր յեկել բանվոր գասակարգի ուժերին չվստահելուց։ Նա փորձեց նույնպես ոգտագործել մեր անտեսության մեջ առաջ յեկած գժվարությունները (հնձի և հացի մթերման ու նրա արտահանության շուրջը տեղի ունեցած սխալ հաշիվները, և այլն)։

Ճիշտ ե, ոպպոզիցիան համագումարում հանդես չեր գալիս, վորպես իսկական Փրակցիա, բայց նա անպայման Փրակցիայի կազմակերպման սաղմային շրջանումն եր գտնվում, վորովհետև ոպպոզիցիան, հանձին լենինգրադի կազմակերպության, առաջուց, գեռմինչև համագումարի բացումը, մինչև վիճաբանությունների սկսվելը, պայմանավորվել իր քվեարկել կենտրոնական կոմիտեյի գեմ՝ չնայած այն հանդամանքին, վոր համագումարի պատգամովորների ընարությունների ժամանակ, ընդհանուր առմամբ, կարծես թե կենտրոնական կոմիտեյի հետ եր։ «Լենինգրադսկայա Պրավդան», արդեն մինչև համագումարի բացումը, գարձել եր Փրակցիոն որդան, ավելին՝ համագումարի կողմից վորոշմները ընդունելուց հետո «Լենինգրադսկայա Պրավդան» շարունակում եր արդեն ընդունված

վորոշումները չընդունել և ժխտել։ Այս արդեն նշանակում եր չենթարկվել կուսակցության կամքին, սա արդեն ֆրակցիոն գործունեյություն եր։ Համագումարը, ինչպես հայտնի յէ, փոխեց „Լենինգրադկայա Պրավդայի“ խմբագրությունը և ուղղեց թերթի գիծը։ XIV-րդ համագումարից հետո ել, ոպպոզիցիան դեռ շարունակում եր ֆրակցիոն պայքարը մղել կենտր. կոմ.-յի դեմ, ստեղծելով դրանով, կուսակցության շարքերի միասնականության վերաբերմամբ բավական ծանր վտանգ։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ Կուսակցության ներսում խմբավորումներ ներսության միջնորդ առաջ գալու վտանգը շատ մեծ է, վորովհետեւ գործությունները ԱՌԱՋ այդ խմբավորումները կարող են պատճառ դառնուի ՎՏԱՆԳԸ Նալ կուսակցության պառակտման և բաժանման։

Կուսակցության ներսը առաջ յեկած խմբավորումները վտանգվոր են հեղափոխության գործի համար՝ մինչ իշխանության խլելու շրջանում, ցարիզմի և բուրժուազիալի գեմ մղվող կովորդվարին շրջանում, վորովհետեւ դրանով թուլացնում են կուսակցության կռվի և հաղթության վերաբերմամբ ունեցած միասնական կամքը։ Բայց վոչ պակաս, յեթե վոչ ավելի, վտանգավոր են ներկուսակցական խմբավորումները իշխանությունը զրավելուց հետո։ Պետք է միշտ հիշել, վոր մեր կուսակցությունը կառավարչական կուսակցությունն եւ նա զեկավարում եւ պետական խորհրդային ապագարատը, հետեւում է կարմիր-բանակի ռազմունակության, հարաբերության մեջ մանում ստարյերկը ապետությունների հետ, զեկավարում եւ արհեստակցական (պրոֆեսալիստական) միությունները, կոռակերացիան և այլն։ Յեթե կուսակցության մեջ տարածայնություններ առաջ գան, յեթե նա միաձույլ չինի ու աշխատանքի մեջ համաձայն գործունեյություն ցույց չտա—պարզ ե, վոր կուսակցության ներսը գոյություն ունեցող այդ բազմաթիվ ուղղություններն ու հոսանքները իրենց ազդեցությունը կունենան և մեր պետական ապագարատի վրա։ Յեթե կոմմունիստների մեջ բանակով տեղի ունենա, այն ժամանակ ամեն մի անկուսակցական կասի. «Ե՞ն, գուք կոմմունիստներ, նախ, ինքներդ դեռ մի համաձայնության յեկեք, հետո համոզեք մեղ՝ ձեր ընդհանուր ճշտության մեջ, իսկ այնուհետեւ մենք եւ կարող կիմնեք աշխատել այնպես, ինչպես դուք կարեոր եք համարում»։

Անհրաժեշտ ե, կուսակցության միասնականությունը իշխանությունը խլելուց հետո պաշտպանել և խնամքով պահպանել այն պատճառով, վոր շրջակա կացությունը ինքնին

պահանջում ե կուսակցությունից կուռ միություն։ Յեվ իսկապես, մեր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը (ԽՍՀՄ) առաջվա նման ըրջապատված ե մեզ թըշնամի կապիտալիստական պետություններով. վորոնք հարմար ըովե են վնասում բանվոր գասակարգի իշխանությունը տապալելու համար։ Իսկ նոր բուրժուազիան—նեպմաններն ու կուրակները, վորոնց մենք թույլ ենք տվել մեր յերկրի ընդհանուր շինարարության մասնակցել՝ միթե մեր բարեկամներն են հանդիսանում։ Մեզ շատ և շատ անգամ կարիք ե լինում դժվարություններով հաղթահարել՝ խորհրդային ապագարատի և գյուղացիության վրա ունեցած նրանց ազդեցությունը։

Ահա, այս պատճառով, Վ. Ի. Լենինը վճռական կռիվ եր մզում կուսակցությունը քայլայող տմեն տեսակ խմբավորումների գեմ։ Ահա, թե ինչ եր առում Իլիիչը այդ մասին, կուսակցության X համագումարում. «Դուք, ընկերներ, չեք կարող չգիտենալ, վոր մեր բոլոր թշնամիները, վորոնք լեզեններով *) են, իրենց բազմաթիվ որդաններում **) կրկնում և զարգացնում են արև հարյուր և հազար բերան խոսակցությունները, վորոնք այստեղ, խորհրդային հանրապետության ներսում տարածվում են մեր բուրժուական և մանր բուրժուական թշնամիների կողմից, ու արտայառություն գտնում հետեւյալ գատողությունների մեջ. յեթե կտ դիսկուսիա—նշանակում է կան վեճեր, յեթե կան վեճեր—կան երկպառակություններ, յեթե կան երկպառակություններ—նշանակում է կոմմունիստները թուլացել են, գեհ, ոգտվիր այդքրոպեյից, սեղմիր և շնուր, ոգտվիր նրանց թուլառությունից։ Այս, մեզ թշնամի բանակի լոգունքն ե գարձել։ Մենք այդ չպետք ե մոռացության տանք և վոչ մի վայրկյան»։ (Վ. Ի. Լենին, յերկ. ժող. հ. XVIII մ. I, Պետհրատ. յեր. 104, ոռու.)։ Յեվ X-րդ համագումարը ընդունեց Լենինի առաջարկած և հենց նրա կողմից կազմված մի առանձին բանաձև կուսակցության միասնականության մասին։ Նրանում մենք կարդում ենք. «Համագումարը գտրձնում է կուսակցության բոլոր անդամների ու շաղագրությունը այն հանգամանքի վրա, վոր նրա շարքերի միասնականությունն ու միաձուլությունը, կուսակցության անդամների մեջ լինակատար վստահություն ստեղծելն ու պրոլետարիատի առաջապահ գնդի իսկական միահամուռ, իսկապնա

*) Այսինքն շատ և շատ։

**) ԽՍՀՄ ի նկատի ուներ արտասահմանյան մենշեկական, եսերական և կաղետական բերթեր։

նրա միտմական կամքը արտահայտող աշխատանքի ապահովումը՝ առանձնագետ կարևոր նշանակություն և ստանում ներկա մոմենտում»:

Միանգամայն հենվելով այս բանաձեի վրա, կենտկոմի 1926 թվի հուլիսյան սլենումը հաստատեց, վոր «կուսակցությունը կարող կլինի ապահովել պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակը միմիայն վորպես միանական կուսակցություն, և միմիայն, վորպես պրոլետարիատի դիկտատուրայի միակ զեկավար», և խստիվ կերպով դատապարտեց նոր ոպպողիցիայի ֆրակցիոն աշխատանքը: (Տես առաջին բաժնի վերջի հավելումը):

ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ Զըռուցի սկզբում մենք ասացինք, վոր պրո-
ցին ԳՎԱՐԴԻԱՅՅԻ լետարական կոփվը դաստիարակում և վճռական
դերը և տոկուն հեղափոխականներ: Սրանք յերկար
տարիներ նախապատրաստում եյին պրոլետարիատին իշխանու-
թյունը տիրելու համար և այդ կովում գարձան ավելի դիմացկուն
ու չնայած, ցարական դահճճների և բուրժուազիայի խատագին հա-
լածանքներին՝ առանց ընկճվելու կովում եյին պրոլետարիատի շա-
հերի համար և այդպիսով ել հասցրին նրան հաղթանակի: Այս նկու-
ղային կամ ստորյերկրյա (գաղտնի գործող) հեղափոխականները
(ՊՈԴՊՈՂՎԱԿԻԿ)՝ բայլշեվիկների հին գվարդիան են կազմում: Մեր
կուսակցության մեջ այդպիսիները քիչ են, ընդամենը մոտ տաս
հազար: Վերջին տարիներս նրանց շարքերը ավելի և ավելի սակա-
վանում են: Բայլշեվիկների հին գվարդիայի դերը կուսակցության
մեջ շատ մեծ է:

Առաջին, դա կուսակցության ամենատոկուն, ամենափորձված
և կենինի ուսմունքին հավատարիմ մասն է: Նկուղային կամ ստոր-
յերկրյա (ՊՈԴՊՈՂՎԱԿԻԿ) հեղափոխականները անցել են առաջին
հեղափոխության պարտության հնոցի միջով, նրանք բեակցիայի
ու տարիներին կուսակցության համար տանջանքների յեն յեն-
թարկել և այնուամենայնիվ նրա մարտական դրոշակները յետ
չեն ծալել, Պատերազմի տարիներին, նկուղային (ստորյերկրյա)
բայլշեվիկները (պոդպողշչիկ-բայլշեվիկները) մնացին, վորպես բան-
վոր գասակարդի միակ և իս ական հեղափոխականները: Հոկտեմ-
բեմբերյան հեղափոխության ժամանակ, նկուղյինները (ստոր-
յերկրայինները) ցուցադրեցին անհախընթաց և չտեսնված վճռա-
կանություն ու համարձակություն:

Համանալի յե, վոր ամեն մի դժվարության դեպքում—գաղտ-
նողործ—պոդպողշիկ բայլշեվիկները տալիս են կուսակցության ալդ

դժվարությունները հաղթահարելու համար անհրաժեշտ տոկունու-
թյունն ու վստահությունը:

Յերկրորդ, պոդպողշիկները (ստորյերկրայինները) իլիչի հետ
միասին եյին կուսակցությունը, առաջնորդում
եյին բանվոր դաստիարակին միապետության և բուրժուազիայի դեմ
մղվող ռաջին կոփվերին: Նրանք անցել են հեղափոխական կոփի
խիստ դժբոցը, ահա և թե ինչու նրանք ունին այդ անգնահատե-
լի փորձը, վորը նրանք (պոդպողշիկները) տալիս են մեր կուսակ-
ցության յերիտասարդ անդամներին:

Բայլշեվիկական հին գվարդիայի հեղինակությունը բարձր ե
վնչ միայն մեր սեփական շարքերում, վնչ միայն մեր Խորհրդային
Միության անկուսակցական բանվորների և գուղացիների շարքե-
րում, այլ և ամբողջ աշխարհի բանվորության և զյուղացիության
մեջ:

Կուսակցության յերիտասարդ անդամների անելիքը կայանում
ե նրանում, վոր հին գվարդիայից սովորեն տոկունության, սովո-
րեն անձնազո՞ն կերպով ծառայել պրոլետարական հեղափոխության,
սովորեն մարտնչել ու կոփել՝ ոգտվելով կուսակցության հանձա-
րեղ առաջնորդ—վ. Ի. Լենինի աշակերտներ — սքանչելի ստոր-
յերկրայինների՝ պոդպողշիկների փորձից:

ՀԱՄ. ԿՈՄ. (ը.)
ԿՈՒՄ.-Ը, ՎՈՐՊԵՍ
ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԿԱՐ-
ԳԱՊԱՀ և ՄԱՐՏԱ-
ԿԱԴ, ԿՈՒՍԱԿՑՈՒ-
ԹՅԱՆ ՈՐԻՆԱԿ

Զնայած այն հանգամանքին, վոր մեր կու-
սակցության ներսում, մինչ Հոկտեմբերյան
հեղափոխությունը և նրանից ել հետո, հա-
ճախ տեղի եյին ունենում ներքին բանակուվ-
ներ — դիսկուսիաներ, առաջ եյին գալիս խըմ-
բավորումներ — այնուամենայնիվ նա հանդիսա-
նում է, վորպես որինակ պրոլետարիատի կարգապահն
կուսակցության: Լենինի ուսմունքի, կարգապահության և
միասնականության շնորհիվ, կուսակցությունը բոլոր դժվար գեպ-
երում գտնում եր իր գործողությունների համար անհրաժեշտ
ուղիղ ճանապարհ և արագ կերպով վերացնում տեղի ունեցող տա-
րածայնությունները:

Մեր կուսակցության առանձնահատուկ կողմը կազմում ե նրա
մարտական (ԾօԵՅ) բնույթը: Համ. Կոմ. Կուսակցան ամբողջ պատ-
մության ընթացքում, կարմիր գծի նման անցնում ե նրա մար-
տական ծառայություններն ու վստակները: Մեր կուսակցությունը
տասնյակ տարիների ընթացքում կոփել միապետության,
բուրժուազիայի և համաձայնողական կուսակցությունների գեմ: Նա

գեռ հիմա ել, դիվանազիտական ճանապարհով, անհաշտ պայքար ե մղում ոտարյերից ակտությունների դեմ: Կովում ե նույնպես նոր ըուրժուազիայի—նեպմանների և կուլակների դեմ: Ճիշտ է, այդ կովը չի տարվում բարրիկադների վրա կամ խրամատներում, (ակուներում—Ե օկոպա) այլ՝ ոտար պետությունների հետ հարաբերություններ ունենալիս, առետրի մեջ, արդյունութերության շինարարության մեջ, խորհուրդներում և այլն, բայց այս բոլոր նույն ռազմական գործողություններն են դարձյալ, միայն տարվում են այլ միջոցներով:

Համ. Կոմ. (Բ) Կուս. ը, կոմինտերնի և Պրոֆինտերնի միջոցով, շարունակում ե կոփ մղել ամրող աշխարհի համաձայնողականների դեմ—կապիտալիստների դեմ բանվոր դասակարգի միասնական ձական (единый фронт) ստեղծելու համար. նա կովում ե բանվոր դասակարգի և գաղութների ու կիսազաղութների հարստահարված ժողովուրդների միության համար, նա պայքար ե մղում համաշխարհային հեղափոխության համար ընդդեմ կապիտալի:

Զըույցի յերկրորդ մասում ասածներից գալիս ենք այն յեղ բակացության, վոր կուսակցության կարգապահությունը (դիսցիպլինան) և միասնականությունը այն պայմաններն են, առանց վորի պրոլետարական հեղափոխության հաջողությունը կդառնա անհնարին: Մեր կուսակցության միասնականությունն ու կարգապահությունը բոլոր մյուս կոմմունիստական կուսակցությունների համար ծառայում են վորպես որինակ: Մենք այս մասին խոսում ենք թե Համ. Կոմ. (Բ) Կուս.-յան մատուցած ծառայությունները մի ավելորդ անդամ ցույց տալու համար, այլ այն նպատակով, վոր ամեն մի կուսակցական համայնա, վոր նրա վրա զրված ե կուսակցության կարգապահ անդամի մեծ պարտականությունը և վոր նա պետք ե պաշտպանի Համ. Կոմ. (Բ) Կուս.-յան միասնականությունն ու նրա միաձույլ լինելը:

Հ Ա. Բ Յ. ինչումն ե կայանում կուսակցության ներսում խմբավորումներ և ֆրակցիաներ կազմակերպելու վտանգը:

Հ Ա. Տ Ա. Ծ Ն Ե Ր Ը Ն Ո Ւ Թ Յ Ա Ր Յ Ա Ր Հ Ա Ր

1. ԳԱՍԱԿԱՐԳԵՐԻ և ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Յերբ խոսում են դասակարգի մասին, զրանով հասկանում են, արտադրության մեջ ընդհանուր դրությամբ միավորված անձնա- վորությունների մի խումբ, հետեւապես և բաշխական մեջ ընդհա-

նուր գրությամբ միացած, ուրեմն և շաղկապված (միմյանց հետ կապված) ընդհանուր (գասակարգային) շահերով: Սակայն կատարյալ միամտություն կլիներ յենթագլել, թե յուրաքանչյուր մի գասակարգ իրենից ներկայացնում ե մի ինչ վոր կտառարյալ, միատարր ամբողջություն, վորի բոլոր մասերն ել հավասար են միմյանց, վորտեղ իվանը նույնպիսի ե, ինչ վոր Սիդորը:

Վերոհիշյալը որինակով բացատրելու համար վերցնենք ժամանակակից բանվոր գասակարգը: Խնդիրը այստեղ, ի հարկե, նրանում չի կայանում, վոր խելքի և ընդունակությունների մեջ հավասարություն գոյություն չունի: Նույնիսկ բանվոր գասակարգի տարբեր մասերի կացությունը, դրությունը միատեսակ չե: Դա առաջ ե գալիս 1) այն պատճառով, վոր անտեսական միավորների կամ միությունների մեջ լիակատար միատարրություն (միատեսակություն) գոյություն չունի, 2) վորովհետեւ բանվոր գասակարգը, հենց ենպես, յերկնքից պատրաստ ցած չի ընկնում, այլ շարունակաբար առաջ ե գտնիս գյուղացիությունից, որն հետափորներից, կաղքենիությունից (городское мещанство) և այլն. այսինքն՝ կապիտալիստական հասարակության այլ խմբերից:

Իսկապես, միթե պարզ չե, վոր խոշոր, հրաշալի կերպով սարքավորված գործարանի բանվորը այլ ե, իսկ վորքը արհեստանոցի բանվորը—այլ: Այստեղ տարբեր լինելու պատճառը հենց իրենց ձեռնարկությունների տարբերությունից և նրանցում տարփող աշխատանքի ամրող կառուցվածքից ե առաջ գալիս: Մյուս պատճառը կայանում ե, այսպես կոչված պրոլետարական ստաժի մեծության մեջ: Այն գյուղացին, վոր նոր ե միայն գործարան մտել, դա, ի հարկե նման չի այն բանվորին, վորը մանկությունից սկսած աշխատում ե այդտեղ:

«Կացության» տարբերությունը արտացոլվում ե գիտակցության մեջ: Պրոլետարիատը միատարր չե և իր գիտակցությամբ, ինչպես վոր միատարը չե իր կացությամբ և գրությամբ: Նա համեմատած այլ դասակարգերի հետ, ավել կամ պակաս չափով միատարը եւ Բայց, յեթե քննելու լինենք նրա առանձին մասերը, այն ժամանակ կստացի վերը գծագրված պատկերը:

Այդպիսով, իր գտառկարգությամբ, այսինքն յերկարամու, ընդհանուր, վոչ ցեխային, վոչ խմբակային, այսինքն յերկարամու, ընդհանուր, վոչ անձնական շահերի, այլ ընդհանուր գտառված նեղ, կազմի ու անձնական շահերի, այլ ընդհանուր գտառված կարգային շահերի տեսակետից, բանվոր դասակարգը ստորագային շահերի և մի շարք խմբերի և խմբական բարեկարգությամբ:

ինչպես մի ուղիղ շղթա՝ բաղկացած վոչ միատեսակ
պնդություն ունեցող ողակներից:

Ահա դասակարգի հենց այս վոչ միատարբությունը
դառնում է առանձին կուսակցություն՝ ունենալու պահանջի
պատճառ:

Յեփ իսկապես: Բնդունենք մի լոպե, վոր բանվոր դասակար-
զը միատարբ և կատարելապես և բացարձակորեն: Այդ ժամանակ,
նա ամեն անգամ կործեր իր ամբողջ մասսայով: Բոլոր դորձո-
ղությունների զեկավարման համար հերթով կարելի եր ընտրել
առանձին անհատներ և կամ անհատների խմբեր: Դեկավարման
համար մշտական կազմակերպության գոյությունը կլիներ ավե-
լորդ, դա պետք չեր լինի բոլորովին:

Իրականության մեջ գոյություն ունի միանգամայն այլ դրու-
թյուն: Բանվոր դասակարգի կոիվը անխուսափելի յէ: Դեկավարել
այդ կոիվը անհրաժեշտ է: Այդ հարկավոր է, մասնավանդ այն
պատճառով, վոր հակառակորդը խորտմանկ է և ուժեղ, ու կոիվը
նրա ղեմ—զաժան է: Ո՞վ պետք ե զեկավարի ամբողջ դասակար-
գին, նրա վօր մասը: Պարզ ե—նրա ամենառաջավոր, ամենափոր-
ձկած և միմյանց հետ ամենասերտ կապով միացած մասը:

Այդպիսի մի մասն է հանդիսանում և կուսակցությունը:

Կուսակցությունը, դա—դասակարգ չե, այլ դասա-
կարգի մի մասն է, հաճախ նրա շատ փոքր մասը: Բայց կուսակ-
ցությունը դա—դասակարգի գլուխ է: Ահա թե ինչու, ծայր
աստիճան հիմարություն է կուսակցության ու դասակարգի հակա-
զրությունը: Բանվոր դասակարգի կուսակցությունը հենց նա է,
վորը արտահայտում է դասակարգի շահերը ամենալավ կերպով:
Դասակարգը և կուսակցությունը տարբերել կարելի ե այսպես,
ինչպես կարելի ե տարբերել գլուխը ամբողջ մարդուց: Հակա-
դրել չի կարելի, ինչպես չի կարելի կացնով կորել մարդու
դուխը և միևնույն ժամանակ ցանկալ նրան յերկար կյանք:

(Н. Бухарин, Теория исторического материализма, стр.
360—361. Гиз. 1921. Ն. Բուխարին. «Պատմական մատերիալիզ-
մի տեսությունը». Պետական պուստական թանգարան Երևան, 1921թ.).

2. Լենինը կորսակցության կանոնադրության ՄԱՍԻՆ

Ծրագրային և տակտիբական խնդիրներում միասնականու-
թյուն պահպանելը հանդիսանում է վորպես անհրաժեշտություն,
բայց այդ պայմանը բավական չե կուսակցական միության, կու-

սակցական աշխատանքի կենտրոնացման խնդիրների վերաբեր
մամբ... Այս վերջինի համար անհրաժեշտ է նաև կազմակերպու-
թյան միասնականություն, վորը անկարելի և յերևակայել, ընտա-
նեկան—խմբային շրջանակից փոքր ի շատեւ մեծացած կուսակ-
ցություն մեջ առանց ձեւավորված կանոնագրության, առանց փոք-
րածանությունը՝ մեծամասնության յենթարկվելու:

(Ленин. „Шаг вперед, два назад“. Լենին. «Մի քայլ ա-
ռաջ, յերկուսը—յետ»):

«Կանոնագրության մեջ,—ասում է ընկ. Կազմակիչը իր
«Ի՞նչպես ե կառուցված Համ. Կոմ. (բ) Կուսակցություն, —
ընկեր լենինը տեսնում էր իրը խթան՝ շրջապատող հիմար և
ինքնական կամակորության, խմբակային քմահածությունը, խըմ-
բակներում տիրող բանակությունը ձեւը դեմ, վորը կոչում ելին
մտի, իդեալի պալքարի ազատ «պրոցես»—այլ կերպ ասած, նա
կանոնագրության մեջ տեսնում եր, յերաշխիք—կուսակցության
կառականության և պառակտման զեմ: Շատ անգամ, մասն բուրժուա-
քայլայման և պառակտման զեմ: Եթե անգամ և կերպական նպատակ
կան տարբերը ընդունում են հեռավոր և զերծնական նպատակ
նշող ծրագիր, բայց նրանք միասնական սիստեմին, միասնական
կարգապահության չեն կարողանում մշտապես յենթարկվել, չեն
կարգապահության յենթարկվել մեծամասնության, ինչպիսի այդ պարա-
կարողանում յենթարկվել մեծամասնության, ինչպիսի այդ պարա-
կարողանում ե կուսակցության կանոնագրությամբ...
Ղիր կերպով պահանջվում է կուսակցության կանոնագրությամբ...
Վաղիմիր իլիչի ամբողջ աշխատանքը՝ ուղղված կուսակցու-
թյան կառուցման գործին՝ ցույց տվեց, թե վորքան նա, մեծ
նշանակություն եր տալիս կանոնագրության՝ վորից մեծ մասամբ
նշանակություն կովկի և նրա ամբողջ աշխատանքի
կախում ունի կուսակցության կովկի և նրա ամբողջ ավելի մեծա-
հաջողությունը: Կանոնագրության նշանակությունը ավելի մեծա-
նում ե այն պատճառով, վոր Համ. Կոմ. (բ) Կուսակցությունը և
մյուս կոմմունիստական կուսակցությունները՝ հանդիսա-
րողը մյուս կոմմունիստական կուսակցությունները՝ հեղափոխա-
նում ե վաշ թե խաղաղ պրոպագանդակի, այլ վորպես հեղափոխա-
նում կովկի կուսակցություն: (Կազմակիչ. «Ի՞նչպիսի ե կառուցված
կան կովկի կուսակցություն: (Կազմակիչ. «Ի՞նչպիսի այս հայերեն թարգմանություն»):
Համ. Կոմ. (բ) Կուսակցությունը՝ կա հայերեն թարգմանություն»):

3. ՀԵՆԻ ԳՎԱՐԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ

«Ճաշող կովկի առաջին և ամենաղլավավոր պայմանը կայանում
ե միևնույն հեղափոխական կրբով այրվող, և միևնույն ժամանակ
թրենց տեսակետներով միասնական համախների խմբի ընտրու-
թյան մեջ: Այդ պայմանը ապահովված էր որթոգործ *) բայլշեր-

*) Որթոգործ—հետեղական, ճիշտ, հաստատուն:

մից ամեն մի շեղում կատարելու դեմ անխնա կռիվ մղելով:
Բայց, այդ անխնա կռիվը, մշական ինքնազառումը, միացրին կռւ-
սակցության հիմական խմբի շարքերը այնպիսի մի բռունցքի
մեջ, վորը չի կարելի բացել և փոչ մի ուժով... կռւսակցության
անդամներից պահանջվում եր մասսաների մեջ իսկական կռւսակ-
ցական աշխատանք տանել, աշխատանք—ամեն տեսակ պայմաննե-
րում, առանց փորեկ դժվարություն ի նատի ունենալու: Հի-
շենք, վոր հենց այս կետի շուրջը ծագեցին տարածայնություններ
մենշևիկների հետ: Հենց այստեղ առաջ յեկավ կագրերի (հիմա-
կան մասերի) կազմակերպման պրոցեսուր. կագրեր, վոչ թե շա-
տախոսներից, վոչ թե «համակրող» մտավորականությունից (ին-
տելիգենցիայից), վոչ թե «ուղեկիցներից» կազմված, վորոնք այսոր
այստեղ են, վաղը—այստեղ, այլ այնպիսի մարդկանցից, վորոնք
հեղափոխության համար, ծագալիող կռիվ, կռւսակցության հաղ-
թության համար՝ պատրաստ են զոհարեցել ամեն ինչ, գնալ դեպի
տաժանակիր աշխատանք, դեպի բարրիկադ, և կամ անվերջ թա-
փառումների ու հալածանքների յենթարկվել:

(Н. Бухарин. „Железная когорта революции“, стр. 71—
72. Ն. Բուխարին. «Հեղափոխության յերկաթե կոհորտան»: ոռու.
յեր. 71—72):

ԿԱՏԱՐԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Մասձեք, ի՞նչ դեր է կատարում ձեր բջիջը ձեռնարկության մեջ, և
համառոտ յեղակացություններ հանելով՝ գրեք տեսքերում:
2. Որինակ բներք ձեր բջիջում կամ կազմակերպության մեջ տեղի
ունեցած կռւսակցական դիսցիլինային (կարգապահության) կռպիտ խախ-
տումների մասին, և բացարեք, ի՞նչ պատճառով են նրանք առաջ յեկել և
ի՞նչպես են նրանց դեմ կռվել բջիջն ու կազմակերպությունը:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ի՞նչու բանվոր դասակարգին անհրաժեշտ և ունենալ իր քաղաք-
ան կռւսակցությունը:
2. Պատճեք, թե ի՞նչ հիմունքների վրա է կառուցված Համ. Կոմ. (ր)
կռւսական կանոնադրությունը:
3. Թվեք կռւսակցության անդամի դիմավոր պարտականությունները:
4. Ի՞նչ նշանակություն ունի կռւսակցության կարգապահությունը
(դիսցիլինան) և միասնականությունը (ЕДИНСТВО):
5. Բացարեք, թե ի՞նչ զանազանություն կա «ներկռւսակցական ֆրակ-
ցիա» յի և «անկռւսակցականների ժողովներում ու համագումարներում գոր-
ծող կոմիտեների մեջ»:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶՐՈՒՅՅ

ՀԱՄ. ԿՈՄ. (Բ) ԿՈՒՍ.-Ը—ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ Ե

Ի՞ՆՉԻ ՄԱՍԻՆ Ե Անցյալ զրույցի մեջ մենք ցույց տվինք,
ԶՐՈՒՅՅԸ թե ինչպես ե կառուցվում Համ. Կոմ. (ր)
Կռւս.-ը: Այստեղ մենք կպատմենք, թե ինչու մեր կռւսակ-
ցությունը բանվորական կռւսակցություն ե, և թե
ինչպես կռւսակցության միջի բանվորական մեծա-
մասնությունը ապահովում է նրա աշխատանքի ուղղիղ
գիծը: Հետո, մենք կծանոթանանք, թե կռւսակցությունը ինչ
միջոցների շնորհիվ ե կանոնավորում իր կազմը, այնպես, վոր մե-
ծամասնությունը նրանում պատկաներ բանվորական կորի-
գին (միջուկին): Միևնույն ժամանակ, մենք ցույց կտանք, վոր
կոմմունիստական կռւսակցությունը, լինելով բանվորական կռւսակ-
ցություն և պաշտպանելով պրոլետարիատի շահերը, դրա հետ միա-
սին նա բոլոր աշխատավոր մասսաների դեկավարն է հան-
գիսանում, և առաջին հերթին—դյուլացիության աղքատ և միջակ
մասաների դեկավարը:

1. ՀԱՄ. ԿՈՄ. (Բ) ԿՈՒՍ.-ՅԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՒԿԻ
(ԿՈՐԻԶԻ) ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՄ. ԿՈՄ. (Բ) Կռւս.-ը բանվորական կռւ-
սակցություն եւ: Դա նշանակում է, առաջին,
ԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒ-
ԹՅՈՒՆ Ե վոր այն նպատակներն ու ձգտումները, վոր
թՅՈՒՆ Ե իր առաջ կոմմունիստական կռւ-
սակցությունը, նույն ինքն բանվոր դասակարգի նպատակներն ու
ձգտումներն են: Համ. Կոմ. (Բ) Կռւս.-յան դիմավոր նպատակն է
ամբողջ կյանքը կոմմունիստական հիմունքներով վերակազմելը:
Այդ բանին է ձգտում պրոլետարիատը: Բանվոր դասակարգը կա-

մենում ե, վոր բոլոր ֆաբրիկաները, գործարանները և այլն պատկանելին ամբողջ հասարակության, բանվոր դասակարգը ուղում ե, վոր գոյություն չունենա մարդու կողմից շահագործելը. Բանվոր դասակարգը կամենում ե վոչչացնել վերջ ի վերջո հասարակության դասակարգերի բաժանվելը: Յերկրորդ, կոմմունիստների կուսակցությունը բանվորական կուսակցություն ե այն պատճառվ, վոր իր նպատակների իրագործման միջոցը տեսնում ե միայն բանվոր դասակարգի դիկտատուրայի մեջ: Կոմմունիզմի համար մղվող կովում, վորպես մինչև վերջ հետեղական, իսկական մարտիկ (կովող) հանդիսանում ե միմիայն բանվոր դասակարգը, վերջապես, յերբորդ, մեր կուսակցությունը բանվորական կուսակցություն ե այն պատճառվ, վոր նրա հիմնական, դեկավար կորիզը (միջուկը) կազմված ե պրոլետարիատի ներկայացուցիչներից:

Բայց ինչպես կարելի ե բացատրել այն հանգամանքը, վոր կոմմունիզմի համար, վորպես միակ, մինչև վերջը հետեղական մարտիկ հանդիսանում ե միմիայն բանվոր դասակարգը, և ինչու կոմկուսի հիմնական միջուկը (կորիզը) կազմված ե բանվորներից:

Կարող են ասել,—չե՞ վոր միայն բանվոր դասակարգը չի, վոր շահագործվում ե կապիտալիզմի ժամանակ, գտնվում աղքատ դրության մեջ, ու միենույն ժամանակ հանդիսանում վորպես արտադրող դասակարգ: Չե՞ վոր գյուղացիությունն ել, իր ամբողջ մասսայով նույն դրության մեջ ե գտնվում և արտադրում ե հասարակության համար մի շարք ամենաանհամեշտ կենսական նյութեր: Ինչու միայն բանվոր դասակարգն ե կապիտալիզմի զեմամենավճռական պայքարողը համարվում: Այդ բանի պատասխանը կայանում ե հետեյալում: Պրոլետարիատը ունի յերկու եյական առանձնահատկություններ, վորոնք նրան տարբերում են գյուղացիներից և աշխատավորների այլ խավերից: Առաջին, բանվոր դասակարգը, արտադրության գործիքների և միջոցների հետ մոմավոր սեփականությամբ կապված ըմբելով շահագործված չե նըրանց պահպանման խնդրում: Պրոլետարիատը — արտադրության միջոցների սեփականատեր ըմբելով—դառնում ե հասարակական, կոմմունիստական սեփականության մարտիկ: Յերկրորդ՝ նրա աշխատանքի պայմանները (խոշոր ձեռնարկություններ, ուր հարյուրավոր և հազարավոր պրոլետարներ են աշխատում միասին) նըրապատռում են բանվորության մեջ սերտ միության, կազմակերպված լինելու ու միասնաբար գործելու պահանջ և սովորություն առաջ բերելուն: Արտադրության մեջ մի գործարանամասը, ցե-

խը—կախված ե մյուսից, և այս հանգամանքը, ընկերական ու միասին տարվող աշխատանքի անխուսափելի պայմանն ե կողմում: Ֆաբրիկան, գործարանը—կազմակերպում են բանվորներին, վորպես մի ամրողություն, և նրանք ավելի, քան մի այլ դասակարգ՝ պատրաստված են կոմմունիզմի համար, այսինքն հասարակության մի այնպիսի կազմակերպության համար, վորտեղ արտադրությունը կառուցված ե կոլլեկտիվ սկզբունքներով: Գյուղացին—սեփականատեր ե, նա շահագրգուված ե նախ և առաջ, իր և վոչ թե ընդհանուրի՝ սեփականության պահպանման և մեծացման խնդրում: Գյուղացու անտեսությունը—անհատական է: Ամեն մեկը աշխատում ե ինքն իր համար, առանց մյուսների հետ աշխատակցելու: Գյուղացիների այս բաժան-բաժան յեղած դրությունը (և բացի այդ այն, վոր գյուղացին կալվածատերերի լշանության ժամանակ ծամանակ ծայրի գյուղացիներին պինդ բռնել իր մի կտոր հողը, և բացի այդ մի կտոր հողից ուրիշ վոչինչ աշխարհում չտեսնել): Միմիայն պրոլետարիատը՝ կապիտալիստական հասարակության մեջ ունեցած իր դասակարգային առանձնահատուկ դրության շնորհիվ,—մի հասարակություն, վոր հիմնված ե վարձու աշխատանքի վրա—մինչև վերջ շահագրգուված ե կապիտալիզմի վոչչացման և կյանքը կոմմունիստական հիմքերով վերակազմելու մեջ: Այս, թե ինչու մեր հեղափոխական կուսակցության հիմնական կորիզը կազմում են բանվորները,

Կուսակցության միջի բանվորական կորիզի (հիմքի) նշանակությունը կայանում ե նրանում, վոր նա ապահովում ե կուսակցության՝ բանվոր դասակարգի հետ ունեցած սերտ կապը, և այդպիսով հսարակություն ե տալիս կուսակցության՝ բանվոր դասակարգի հեղափոխական նպատակներին համապատասխան քաղաքականություն գործադրել: Մեր կուսակցության բանվորական կորիզի մեծ նշանակությունը ավելի ցայտուն կերպով յերեան և գալիս կուսակցության համար ծանր նշանակություն ունեցող տառանումների և ներքին վեճերի գժվարին ըովեներին:

Որինակի համար հիշենք այն դիսկուսիան*), վոր տեղի ունեցավ 1923 թվի վերջին և 1924 թվի սկզբին: Այդ ժամանակ ընկեր Տրոցկին և մյուսները փորձում եյին ապացուցել, վոր մասսայի տրամադրությունների մասին կարելի յե դատել՝ ի նկատի ունենալով, թե կուսակցական ուստանող յերիտասարդությունը ինչպես

* Դիսկուսիա նշանակում ե բանակուիլ, վեճ:

Եպահում իրեն։ Նրանք տառւմ եյին, վոր միմիայն ուսանող յերիտասարդությունն ե, վոր հանդիսանում ե, նրանց կարծիքով, Համ. Կոմ. (բ.) Կուսայան ամենազգայուն մասը, և վոր նա և արտահայտում բանվոր դասակարգի, կուսակցական ամբողջ մասսայի տրամադրությունները և այդ պատճառով ել կուսակցություն մեջ զըլխավոր գերը պետք ե կատարի նա։ Բայց բանվորական (Փաբրիկագործարանային) բջիջների մեծ մասը գեմ գնաց ոպպոզիցիայի հայցքներին և XIII-դ համագումարը (1924 թ. մայիսին) տվեց այն ցուցմունքը, «վոր կուսակցությունը պետք ե ուղղվի գեղի իր հիմնական բանվորական կորիզը (միջուկը)»։

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆ
ՄԵԶ Սակայն, բոլորին հայտնի յե, վոր մեր կուսակցության մեջ, բացի բանվորներից մըտ-

ՄԵԶ նում են նաև գյուղացիներ, ծառայողներ և ինտելիգենցիա։ Վերը մենք ասացինք, վոր մեր կուսակցության ծրագիրը բանվոր դասակարգի հեղափոխական կովի ծրագիրն ե։ Բայց կոմմունիստական կուսակցությունը կովելով պրոլետարիատի շահերի համար, միևնույն ժամանակ կովում ե կապիտալիզմի կողմից շահագործվող բոլոր աշխատավորների շահերի համար։ Առաջին հերթին, ինչպես այդ հեշտ հասկանալի յե, խոսքը այսպես վերաբերում ե գյուղացիության։ Վ. Ի. Լենինը առանց դադար ունենալու և շարունակաբար մեզ սովորոցնում եր, վոր առանց աղքատ և միջակ գյուղացիության հետ միություն ունենալու մենք սոցիալիզմ անկարող կլինենք կառուցել։

Համ. Կոմ. (բ) Կուսակցությամբ կառուցում ե ցրված ու բաժան-բաժան յեղած գյուղացիական մասսաների շրջապատման պայմաններում։ Յեթե կուսակցության մեջ չունենանք գյուղացիության լավագույն ներկայացուցիչներին, յեթե գյուղացիության հետ կապ չպահպանենք—կարելի յե ասել, վոր սոցիալիզմի համար մղվող կախվը սկզբից և յեթ անհաջողության ե մատնված։ Ահա, թե ինչ պատճառով, կուսակցությունը իր շարքերն ե գրավում գյուղացիության։ Կուսակցության մեջ ընդունվում են գյուղացիներից նրանք, վորոնք յուրացըել են բանվոր դասակարգի հայացըները, և հասկացել, վոր մանը, անհատական տնտեսությունը խանգարում է կոմմունիզմի իրականացման, և վոր կոմմունիստական տնտեսության և հասարակակարգի համար մղվող կոհիվը վոչ միայն բանվորների, այլ և իրենց, գյուղացիների գործն ե։

Համ. Կոմ. (բ) Կուսակցությամբ հաշվի առնելով գյուղացիության դա-

սակարգային առանձնահատկությունները, նրանց (զյուղացիության) կուսակցության մեջ մասերու ցանկության գեպքում՝ կատարում ե ավելի խիստ ընարություն, քան այդ անում ե բանվորներ ընդունելիս։ Կուսակցության մեջ գյուղացիների թիվը ավելի քիչ ե, քան բանվորներինը։ (Տես № 1 գիագրամման)։

Կուսակցությունը ավելի խիստ ընտրու կուսակցությունը թյուն ե կատարում՝ ինտելիգենցիայից յուր կուսակցությունը։


ՄԵԶ շարքերը մտնել ցանկության վերաբերմամբ։ Դա բացարձում ե նրանով, վոր ինտելիգենցիան կապիտալիզմի ժամանակ, հազարավոր կապերով կապված եր բուրժուազիայի հետ։ Նա ծառայում եր բուրժուազիային և նրանից ել ոռնիկ ստանում։ Բայց այսուամենայիվ, կուսակցությունը իր շարքերի մեջ ընդունում ե ինտելիգենցիայի այն լավագույն և առաջավոր ներկայացուցիչներին, վորոնք ամեն մի կապ միանդամայն խզել են բուրժուազիան և մանը բուրժուազիան հայցքների հետ ու ամբողջովին ընդունում են պրոլետարիատի կուսակցության ծրագիրը։ Պետք ե հիշել, վոր միջազգային պրոլետարիատի առաջնորդները և—Մարքսն ու Լենինը—դուրս յեն յեկել ինտելիգենցիայի շարքերից։ Բայց սոքա, իրենց ամբողջ կյանքով և աշխատանքով պրոլետարական ամբության, անձնագոնության և աշխատավորների ազատազրման գործին հավատարիմ լինելու որինակ ցույց տվին։

Վերջին տարիներս, Խորհրդային Միության մեր ինտելիգենցիան (որինակի համար գյուղական ուսուցիչները, գյուղատնտեսները, ձեռնարկություններում աշխատող մասնագետները և այլն) մեծ մասամբ բանվոր գասակարգի համար աշխատում ե անկեղծորեն և մեծ ոգուտ տալիս մեր շինարարական գործին։ Կուսակցությունը իր ծրագրում և վորոշումների մեջ անդադար արտահայտվել ե այն մասին, վոր բանվոր գասակարգը պետք ե գեղ իրեն գրավի Խորհրդային (սովետական) շինարարության հումակրող ինտելիգենցիային՝ ընկերական պայմաններ ստեղծելով նրա աշխատանքի համար։


Պետություն կառավարող մեր կուսակցության մեջ, մասավանդ, ի նկատի ունենալով զրությունը լով թե մեր յերկրի տնտեսության և թե միջազգային դրության մեջ ունցած մեր հաջողությունները՝ վորձում են կուսակցությունը (ԿԱՆՈՆԱ-ԿԵՏՐԸ) կամ 2-րդ կետը)։

Այս պատճառով կուսակցությունը ձգտում ե այնպես կարգավո-

Վճրքան եր կուսակցության մեջ մտնող բանվոր, գյուղացի և այլ
անդամների թիվը 1924 թվի հունվարի 1-ին




Վճրքան եր կուսակցության մեջ բանվոր, գյուղացի և այլ թեկնա-
ծուների (կանդիդատների) թիվը 1924 թվի հունվարի 1-ին




Հնդամենը կուսակցության մեջ կային 445,900 մարդ

Դիագրամմատ Ն. Ռումնից

Վճրքան եր կուսակցության մեջ մտնող բանվոր, գյուղացի և այլ
անդամների թիվը 1926 թվի հունվարի 1-ին



Վճրքան եր կուսակցության մեջ մտնող բանվոր, գյուղացի և այլ
թեկնածուների (կանդիդատների) թիվը 1926 թվի հունվարի 1-ին



Հնդամենը կուսակցության մեջ մտնում ելին 1,076,609 մարդ

Երազակացած Համ. Կոմ. (բ.) Կուսակց.

(Կազմված և Համ. կ. (բ.) Կ-յան կ. Կ.-ի վիճակագրական բաժնի Կյութերի հիման վրա)

բել իր սոցիալական կազմը, վոր մեծամասնությունը նրանում բանագործերից կազմված լիներ:

Կուսակցության մեջ բանվորական մասի՝ ազգաբնակության վոչ պլոտետարական խավերից դուրս յեկածների վերաբերմամբ (գյուղացիներ և առանձնապես մանր բուրժուական ինտելիգենցիան, ծառայողներ) ունեցած գերիշխող գերը պահպանելու այդ ձգտումը՝ գտել ե իր արտահայտությունը կանոնադրության յերկրորդ պարագրաֆում, ըստ վորի, այն բոլոր անձնավորությունները: Վորոնք ցանկանում են կուսակցության մեջ ընդունվել՝ բաժանվում յեն յերեք կատեգորիայի: —

1) Բանվորներ, Կարմիր-բանակայիններ՝ բանվորներից և գյուղացիներից, ու բատրակներ (գյուղական բանվորներ): 2) Գյուղացիներ (բացի Կարմիր-բանակայիններից), ուրիշի աշխատանքը չշահագործող տնայնագործներ (կուստարներ): 3) Այլք (ծառայողներ և այլն):

Կուսակցությունը, դադահի մոտի արդյունաբերական բանվորին (առաջին կատեգորիայի առաջին խումբը) ընդունում ե առանց մի առանձին ձևականությունների: Յեթե այդպիսի բանվորը գիտակից ե, հասկանում ե կուսակցության մեջ գոյություն ունեցող կարգապահության անհրաժեշտությունը, բավական ե, վոր նա ներկայացնի միայնակ կուսակցական ստաժ ունեցող կուսակցության անդամներից յերկուսի յերաշխավորություն: — և նա կարող ե ընդունվել կուսակցության մեջ*):

Գյուղացիները և տնայնագործները (կուստարները) դասված են յերկրորդ կատեգորիայի շարքը և կուսակցության մեջ ընդունվելու համար այդպիսիները պետք ե ներկայացնեն յերկամյա ստաժ ունեցող կուսակցության անդամներից յերեքի յերաշխավորություն:

Ծառայողները, ինտելիգենտները յերրորդ կատեգորիայի շարքն են դասված և նրանցից՝ կուսակցության մեջ ընդունվելու համար, պահանջվում ե ներկայացնել հնգամյա կուսակցական ստաժ ունեցող կուսակցականներից հինգ անդամի յերաշխավորություն:

Մինչ XIX-րդ համագումարը և հենց այդ համագումարում, կուսակցության մեջ՝ կուսակցության աճման կարգավորման հարցի

* Վոչ արդունաբերական բանվորները, Կարմիր բանակայինները՝ բանվորներից և գյուղացիներից ու բատրակները (գյուղական բանվորները) ներկայացնում են յերկամյա ստաժին կատեգորիայի յերկրորդ խումբը:

շուրջը տարածայնություններ առաջ յեկան: XIX-րդ համագումարում, ոպազողիցիայից մի քանի ընկերներ (լենինգրադցիները) առաջապես սկզբում, Միության բոլոր արդյունաբերական բանվորների ինն-տասերորդ մասը, մինչ XIX-րդ համագումարը կուսակցության շարքերն ընդունելու լոգունվը: Դրանց առաջարկությունները քննադատության յենթարկելուց հետո, հարցը նրանք մի փոքր այլ կերպ գրին: Պետք ե, ասում ելին նրանք, կուսակցության մեջ յեղող բանվորների քանակը հասցնել նրա անդամների ընդհանուր քանակի իննը տասերորդ մասին:

Յեթե կուսակցությունը կանգներ, մի տարվա ընթացքում կուսակցության շարքերի մեջ բանվորների այդպիսի մասսայականություն կատարելու համար կատարել վարքական մեջ պահպանային կաթսայում, վորոնք գեռ չեն հասել իսկական պրոլետարական գիտակցության: Յեթե մենք այս խնդրում դնայինք Տամանակամիջոցում, նոր կուսակցականների միլիոնավոր մասսային, վորոնք գեռ նույն իսկ չեն հասկանում պրոլետարիատի դասակարգային շահերը՝ անկարող կլինեյինք բայլենի: ական դաստիարակություն տալ:

XIX-րդ համագումարը գորոշեց, „Վոչ պրոլետարական տարրերի կուսակցության շարքերը ընդունելու վերաբերմամբ վարոշված սահմանափակիչ միջոցների խստիվ գործադրման անհրաժեշտությունը կրկին անդամ հաստատելով, համագումարը մերժում ե այն բարքականությունը, վորը տանում գեպի կուսակցական շարքերի դասահման ուռչումը և այդ շարքերը՝ արհմիությունների և ընդհանրապես, պրոլետարական կազմակերպությունների գլուցը չանցած կիսապրոլետարական տարրերով լցնելը“:

Մեր կուսակցության կանոնադրության ինքնուրի չլուրի յերկրորդ կետի սկզբում ասվում ե, վոր ԱԱՀԱՆՎՈՒՄ ԹԵԿ կուսակցության մեջ ընդունվելը կատար ԴԱԾԱԿԱՆ ՍՑԱՓ վում ե թեկնածվական ստաժը անցնելուց հետո գրագրական գրագրությունների թույլացնելուց հետո:

Կուսակցության անդամ լինելու համար, պետք է դեռ ևս անցնել վորոշ փորձի բովից—պետք է վորոշ ժամանակով լինել Համ. Կոմ. (Բ) Կ.-յան անդամության թեկնածու։ Սա դատարկ ձեռականություն չե։ Կուսակցության մեջ այլ ձեփ, առանց թեկնածվական ստաժի ընդունելություն կատարելու դեպքում կարող ե ստացվել կրկնակի սխալ։ Նախ՝ բջիջի բյուրոն և կամ հենց ընդհանուր ժողովը, և նույն իսկ կուսակցության կոմիտեն կարող են սխալվել կուսակցության շարքը ընդունվող անձնագործության վերաբերմամբ։ Յերկրորդ, կարող ե պատճեն, վոր վորմե մեկը, հայտարարություն ե տալիս կուսակցության մեջ ընդունվելու նըպատակով՝ չհասկանալով կարգին, թե ինչու համար ե ուզում կուսակցության մեջ մտնել։ շատ անդամ ել մտնում ե հենց միայն շահադիտական նպատակներով։

